Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 255 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 7 ՆՈՅԵՄԲԵՐ 1884 (Ն. Տ.) 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1 ՍԷՓԷՐ 1302

ԳԱՆՈՒՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2 ղուրուշ է. տարեկան ստորագրողներու համար զայն սակարկութիւն կըլլայ։

Օրագրատու վերադարձուիլ չեն կրնար որ և իցէ գրութիւն պետք է տպուիլ։

«Առ. խմբագրատեղեակ ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԹՈՐԵԱԳՐԱՏՈՒՆ. Պոլսոյ թաղ. Գալատայի խան։ Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէին։

درعلیه ده‌طلغ ده‌ده‌لر اوزره‌ ایکنجی نومره‌لی خانده‌ غزته‌ اداره‌سی

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY. Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	Համար	Տարեկան	դահեկան	արծաթ.....200
»	»	Վեցամսեայ	»	» 100
»	»	Եռամսեայ	»	» 50
»	»	Հատով	»	» 1
Գաւառաց	Համար	Տարեկան	»	» 240
»	»	Վեցամսեայ	»	» 120
»	»	Եռամսեայ	»	» 60
Օտար	Երկիրներ	Տարեկան	Ֆրանք	 56
»	»	Վեցամսեայ	»	 28

Դուրս ղրկուած լրագրաց համար ծախքը խմբագրութեան վրայ է։

Ծանուցմունք կընդունուին
ԻՍԳԴՐՈՆ ԷՃԷՆՍԻ
գործակալութեան ձեռամբ, Բարաքէօյ, Տէյիրմէն խան։

Կ. ՊՈԼԻՍ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ 7 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Այն գործի գործունէութիւն զոր վերջին շաբաթներու մէջ ցոյց տուին Միացեալ Ընկերութեանց պաշտօնական մարմիններն, և Ամրան մնացեալն, որ ազգային այս կարեւոր հաստատութեան ճակատագրոյց մէջ կարեւորագոյն դերը կատարող եղանակն է ամբողջ տարւոյն, առիթ կ'ընծայեն մեզ՝ աչադրութիւն հրաւիրելու Միացեալ Ընկերութեանց վիճակին վրայ։ Ցնորբէն ժողովոյ և Ելմտական Ցանձնաժողովոյ Տեղեկագիրքերէն, զորս մեր վերջին թիւերով հրատարակեցինք, ընթերցողը ստացան Ընկերութեան արդի կացութեան վրայ պէտք եղած ծանօթութիւնները, զորս կրնայ աւելորդ կը դատենք։ Բայց այս տեղեկութիւնք կը ցուցնեն թէ Միացեալ Ընկերութեանց վիճակն արժանի է խորին հոգածութեան, թէ՝ այն ծառայութեանց պատճառաւ զորս կը մատուցանեն և թէ՝ այն նիւթական դժուարութեանց պատճառաւ որոց կը բախին, և որք արգելք կը լինին կատարման այն բանաւոր ակնկալութեանց որք դրուած են այս հաստատութեան վրայ։

Եւ նախ, Ընկերութեան կատարած ծառայութեանց վրայ խօսելով, կըրնանք հաստատել, առանց հերքման երկիւղի, թէ, եթէ Ընկերութեան գաւառային 28 վարժարանք չեն հասած այն բարձրութեան ուր ամենուս փափաքն է տեսնել զայնս, միւս կողմէ քան մեծի մասին չափազանցեալ են այն յոռետես քննադատութիւնք որք մերթ ընդ մերթ կ'ուղղուին անոնց դէմ, և անկեղծութեան կամ անկողմնակալութեան դրօշմը կրել չեն թուիր։ Ընկերութեան այն վարժարանք որ քաղաքներու մէջ բացուած են անհամեմատ լաւագոյն վիճակ մ'ունին բաղդատմամբ անոնց որք գիւղերու մէջ բացուած են։ Գրեթէ բնական է որ այսպէս լինի։ Ո՛չ ոք կ'ակնկալէր թէ Միացեալ Ընկերութիւնք հրաշքներ պիտի գործէին այնպիսի անմշակ վայրերու մէջ, ուր թերեւս առաջին անգամ լինելով դպրոց մը կը բացուէր։ Ուսուցչութիւնք, հսկողներ, տեղային ոյժեր, վերջապէս յոգնատրութեան ամէն տարերք կը պակասէին՝ երբոր Ընկերութիւնք կը ձեռնարկէր Վարժարանի ու Ցարօնոց ասմունքին խնդրոյ, ասմունքն յետադէմ մնալուանց մէջ մնալնէ կրթութեան գործն։ Եւ գանենք լրացուցիչ ոյժերով չէին պրնար Միացեալ Ընկերութիւնք երբ արպիսի հաշխատութիւն մը յանձն կ'առնէին։ Նոցա միջոցները սահմանափակ էին, և են։ Այս ամենայնայնմանք պարտին չափաւորել մեր առկնկալութիւններ, և այս տեսութեամբ նայելով գործին վրայ, պիտի խորհինք, ընդհակառակն, թէ գոհ լինելու շատ պատճառներ ունինք։ Օրինակի համար. Միացեալ Ընկերութեանց Մշեցի աշակերտք մանաւանդ զգալի յառաջդիմութիւն մը կը ցուցնեն, որոյ վրայ գովեստիւք կը խօսուի ամէն կողմէ (*)։ Դեռ առաջին անգամ լինելով Հայաստանի հողին վրայ հաստատուած իգական վարժարաններէ կ'ելնեն ուսումնաւարտ օրիորդք, որք կը խոստանան նոր գաղափարներով և ազնուագոյն զգացումներով կրթել նոր սերունդն։ Ուրեք ուրեք տեղացիք ինքնօգնութեան կը վարժուին, և առանց բեռ մը լինելու Միացեալ Ընկերութեանց վրայ, կը վայելեն փոքր ի շատէ խնամեալ կրթութեան մը բարիքն. և վերջապէս, ամենէն անակնկալ վայրերէ ձայներ կը լսուին ի նպաստ կրթութեան դատին, և Միացեալ Ընկերութեանց կը դիմուի վարժարաններ բանալու համար, որոց ծախքը կը հոգան նիւթապէս շատ խեղճ գիւղացիներ, որք այսու կ'ապացուցանեն թէ բարոյապէս անչափ խեղճ չեն։

Բայց ձեռնարկուած գործն յոյժ մեծ է, և ամեն ինչ վարդագոյն չէ երբ կուզանք քննել Միացեալ Ընկերութեանց նիւթական վիճակը, մեր առջեւ կ'ելնեն գործին դժուարին և գրեթէ անհաճոյ կողմերն ալ։ Ցնորբէն ժողովն և Ելմտական Ցանձնաժողովը կարգ մը գանգատներ կը դնեն մեր առջեւ։ Ուսուցիչ Հայը ո՛չ եւս կը մասնակցին Միաց. Ընկերութեանց գործին։ Կ. Պոլսոյ պէս մեծ կեդրոնի մը մէջ հազիւ մի քանի հազար Հայ կը մասնակցին տնական բաժանորդութեամբ։ Գաւառաց մէջ մասնաճիւղերը չեն գործեր, կամ դադրած են գոյութիւն ունենալէ։ Իզմիրի պէս գաւառային մեծ կեդրոն մը փարա մը նպաստ չի զրկեր, ևն։

Այս կարգի անհաճոյ պարագայից վրայ մտածելով, անհնար է չցաւիլ որ հայ ժողովուրդն ընդհանրապէս չէ ըմբռնած Միացեալ Ընկերութեանց նշանակութիւնն այնպէս ինչպէս պարտէր ըմբռնել։ Միացեալ Ընկերութիւնք մեր գաւառաբնակ եղբարց ամենէն խեղճ մասը լուսաւորելու համար, Ազգին ձեռքը գտնուած գլխաւոր գործիքն են։ Այս գործիք լաւ կամ գէշ պիտի գործէ ըստ քանակութեան այն բարոյական և նիւթական աջակցութեան զոր գտնէ ժողովրդէն։ Ինչ որ ցարդ հայ ժողովուրդը տուաւ Միացեալ Ընկերութեանց, կը տեսնենք թէ շատ լաւ գործածուած է։ Շատ տարիներ չեն յորմէ հետէ կը գործէ այս հաստատութիւն, և արդէն կը տեսնենք թէ գաւառաց ամենէն խաւարեալ անկեանց մէջ իսկ նոր սերունդ մը պատրաստուած է, քաղաքակրթութեան տարերքով օժտեալ, որ կը խոստանայ մեծապէս դիւրացնել ապագայ սերնդոց քաղաքակրթման գործն։ Այսչափ արդիւնք մը ցարդ կրցանք ձեռք բերել առանց որ և է կերպիւ սպառելու մեր ազգային գործունէութեան միջոցներն։ Ամեան 40 ական փարա բաժնորդագին մ'ի՞նչ կարեւորութիւն ունի, և սակայն արպիսի մեծ գործ մը ապահովելու բաւական է, եթէ տարածուի հայ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ։ Արդ, որպէս զի ժողովուրդն այսչափ փոքրիկ զոհողութիւն մը զլանայ Միաց. Ընկերութեանց, հարկ է գժբախտաբար եմեմադրել թէ ազգային այդ կարեւոր հաստատութեան կատարած գործն իսկ չէ ըմբռնած ըստ բաւականին։

Մեր համոզումն է թէ Միացեալ Ընկերութեանց կայուն վիճակի մը մէջ մընալուն համար պատահանատուութեան բաժին մ'ունին թէ Կ. Պոլսոյ և թէ՝ գաւառաց Հայերն, ինչպէս նաեւ իրարու յաջորդող Ցնորբէն ժողովները, կամ Վարչութիւնները։ Մեր կարուստ մեծ է, երբ խորհինք թէ թանկագին ժամանակ մը կորուսած ենք։ Արեւելեան ազգաց յառաջդիմութեան համար ճիգերը տեսնելով և յիշելով թէ արեւելեան ժողովուրդը ո՛չ եւս առջի մեկուսացեալ դիրքն ունին քաղաքակրթ աշխարհին նկատմամբ, որուն հետ տնտեսական և քաղաքային զօրաւոր մրցումի մ'ունենալու կը մղուին հետզհետէ, պիտի խորհինք անշուշտ թէ մինչեւ ցարդ խիստ քիչ բան ըրած ենք մեր գաւառացի ժողովուրդը պատրաստելու համար։ Միւս կողմէ, մեր կորուստ անդարմանելի չէ, երբ մտածենք թէ կանգուն կը կենան Միացեալ Ընկերութիւնք, պարտաստակալին մեծամեծ ծառայութիւններ առ Ազգն մատուցանելու, ըստ չափու այն օժանդակութեան զոր գտնեն Ազգէն։

Քանի մը միջոցներ կան, զորս աղդուապէս և յարատեւօրէն ի գործ դընելով, կը կարծենք թէ Միացեալ Ընկերութեանց Վարչութիւնը պիտի յաջողի աւելցնել այս հաստատութեան նիւթական ոյժերը։ Ռուսիոյ Հայոց ամենարերութենէն կը գանգատուի Բայց իրաւունք ունինք կարծելու թէ Ռուսիոյ պատուական Հայոց հետ Միացեալ Ընկերութիւնք առաջուան չափ խնամով չեն մշակեր յարաբերութիւնները։ Անընդհատ հրատարակութեանց ու թղթակցութեանց միջոցաւ յառաջագոյն Ռուսիոյ Հայոց հոգածութիւնը միշտ վառ կը պահուէր Միացեալ Ընկերութեան և անոնց կատարած գործին վրայ, մինչ բաւական ատենէ ի վեր դադրած կը տեսնենք իրաց այս գոհացուցիչ վիճակ։ Ամեն ջանք պէտք է ընել՝ կրթական այսպիսի վեհնպատակաւ մը՝ այս սերտ յարաբերութեանց վերսկսման համար։ Բայց մեր մէջ իսկ կատարելի չատ գործեր կան դեռ։ Ինչո՞ւ համար ազգու ջանք մը չլինի լուսագոյն կաղմակերպութիւն մը տալու թաղային և գաւառային Մասնաճիւղերուն, թմրածները գրգռելով ի գործունէութիւն, արդիւնաւորելով քաջալերելով, և անոնց միջոցաւ աւելի ճիւղաւորելով ժողովրդային բաժանորդագրութեան գործը։ Պէտք է նաև խրախուսել գաւառային ինքնօգնութեան ոգին, որ ինչպէս ուրիշ նկատմամբ, նաեւ Միացեալ Ընկերութեանց ձեռնարկած գործին մէջ վերին աստիճանի կարեւորութիւն մ'ունի։ Այս մասին Ելմտական Ցանձնաժողովն ինչ ինչ դիտողութիւններ ըրած է, զորս յոյժ բանաւոր կը համարինք։

Ցանձնաժողովը կ'ըսէ.

«Ուրախ ենք որ ինքնօգնութեան ոգին սկսած է արդ մուտ գտնել մեր գաւառացի ազգայնոց մէջ, որուն նշան մը պէտք է համարինք այն նպաստներ զորս կը ստանանք մի քանի քաղաքաց և գիւղերէից, զոր Պոլի, Զէյթունցի, ազգայիններէ։ Սակայն հարկ է որ այս ոգին մուտ գտնէ ամենուս ըրեք, և այն ամեն քաղաքներն ու գիւղերն, ուր վարժարաններ բացած ենք, տարեկան որոշ գումար մը վճարեն Ընկերութեան, եթէ չեն վճարեր արդէն. հակառակ պարագային, որոշ պայմանաժամ մը յետոյ, պէտք է որ Ընկերութիւնը փակէ անպտուղ իւր վարժարաններ և այլուր փոխադրէ, այնպիսի տեղեր ուր ազգայինք տրամադիր լինին աւելի արժանօրէն դնահատել իրենց եղած բարիքը։ . . . . . ։

Պէտք չէ որ մեր ներողամտութեամբ վարժեցնենք հարուստ գաւառացին նկատել կրթութիւնն իբրեւ անպէտ իր մը որ ծրի կ'աւանդուի։»

Այս տողերու մէջ բացատրուած սկզբունք թէ՝ նիւթապէս յոյժ օգտակար է Միաց. Ընկերութեանց և թէ՝ բարոյապէս մեծ օգուտ կը խոստանայ գաւառացի ազգայնոց համար։ Այդ սկզբան արդարութիւնն և օգտակարութիւնն ապացուցանելու համար բաւ է ըսել թէ Անգլիոյ մէջ իսկ կրթական պաշտօնատուներ քաղաքացւոց և գաւառացւոց կրթական ջանքերուն կ'օգնեն նոյն հաստատութեամբ միայն որով տեղացիներն իրենք կը նպաստեն իրենց կրթութեան գործին։ Դաւառացւոց ամենէն ունեւոր մասին կծծութիւնն առաձի կարգ անցած ճշմարտութիւն մ'է։ Այսպիսիք պէտք չէ օգտին Միաց. Ընկերութեանց առատաձեռնութենէն, ի վնաս աւելի կարօտ վայրերու։

Մեր մեծատանց համար եւս մեծագործութեանց դեղեցիկ և արդիւնաւոր ասպարէզ մ'են Միացեալ Ընկերութիւնք։ Դեռ օ՛չ մէկ Թուրքիացի հայ մեծատուն կրցած է Միացեալ Ընկերութեանց բարերար հանդիսանալ, մինչ քանի մը ռուսահայ մեծատունք իրաւամբ ստացած են զայս տիտղոս։ Մի թէ անհնա՞ն պատիւ մը կը համարուի այս։ Միացեալ Ընկերութիւնք անվրդովտահելի հաստատութիւն մը չեն, քանի որ՝ իրենց կանոնաւոր համարատուութեամբք՝ մեր ազգային հաստատութեանց մէջ ամենէն առաւել գտնուելի հանդիսացած են արդէն։ Միացեալ Ընկերութեանց նպաստակն անկարեւոր չէ, ինչպէս կը տեսնենք ձեռք բերուած արդիւնքէն։ Ի՞նչ է ուրեմն պատճառն որ Թուրքիոյ հայ մեծատունք մղում մը չզգան մեծակալ նպաստներով դիւրացնելու այս հաստատութեան գործը։(*)

Թէ որչափ քիչ բանով մը կարելի է Միացեալ Ընկերութիւններն յաջող վիճակի մը մէջ դնել, դիւրաւ կը հասկցուի երբ նկատենք թէ այն տարեկան բացն, որ մեծ մտահոգութեան նիւթ մ'եղած է Ընկերութեան մէջ, 275 ոսկւոյ չնչին գումար մ'է միայն։ Պէ՞տք է միթէ որ այսչափ գումարի մը համար նեղուի այդպիսի մեծ հաստատութիւն մը։ Անպատուաբեր չէ՞ միթէ Ազգին համար՝ տեսնել թէ իւր կրթական մեծագոյն հաստատութիւն չի կրնար 270 ոսկւոյ բաց մը գոցել։ Քիչ մը ջանք, քիչ մ'ալ զոհողութիւն, և իրաւունք ունինք ակնկալել թէ Միացեալ Ընկերութիւնք անկարեւոր բացի մը տեղ աւելորդ հաստատի կարեւոր գումար մ'իսկ կրնան ունենալ, նոր մշակ մը տալու համար իրենց ազգօգուտ և արդիւնաշատ ձեռնարկութեան։ Կը յուսանք թէ գտնէ առաջիկայ պարահանդիսին առթիւ մեր մեծատունք սովորականէն քիչ մ'աւելի նպաստներ կ'ընեն՝ այդ բացը գոցելու համար, և թէ, վերակազմեալ Ցնորբէն ժողովը նոր եռանդեամբ և մեծագոյն յաջողութեամբ մը կարող կըլլի նիւթական և հետեւապէս բարոյական աւելի փայլուն վիճակ մը տալ Միաց. Ընկերութեանց, իրեն օժանդակ ունենալով Ընկերութեան Երեւելի անձնուէր գործունէութիւնն և Ազգին ամէն դասուց յառաջդիմական ազնիւ զգացումները։

(*)· Ամենայն բանաւոր խորհուրդ մ'է թէ, հայ մեծատունք որք կը կամին ազգասիրութեան արդիւնաւոր գործով մ'անմահացնել իրենց անուն, կարող են պաշտպան հանդիսանալ Միաց. Ընկերութեանց մէկ մէկ վարժարանին, որ այս առթիւ կրնայ կոչուիլ իրենց անուամբ։

(*)· Շատ բանաւոր խորհուրդ մ'է թէ, հայ մեծատունք որք կը կամին ազգասիրութեան արդիւնաւոր գործով մ'անմահացնել իրենց անուն, կարող են պաշտպան հանդիսանալ Միաց. Ընկերութեանց մէկ մէկ վարժարանին, որ այս առթիւ կրնայ կոչուիլ իրենց անուամբ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բ. ԴՈՒՌՆ ԵՒ ՊԱԼԿԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ. Թարգմ. լրագրոյ Կ. Պոլսոյ թղթակցին հետեւեալը կը գրէ Բ. Դրան և Պալքանեան Պետութեանց միջեւ ծագած խնդրոյն վրայ.

«Բ. Դուռը նորէն դիտողութիւն ըրաւ Պուլկարիոյ և Ռումանիոյ կառավարութեանց դէմ, այն անարդար և քմահաճ եղանակին համար որով սոքա կը վարուին՝ վերջին պատերազմէն ի վեր գաղթող եւ կամ Պուլկարիոյ և Տարուեցայի մէջ մնացող Թուրք բնակչաց հետ։ Կը յիշուի թէ այս խնդիր ի նկատ առնուեցաւ Պերլինի Դաշնագրոյն խմբագրութեան պահուն, բայց ո՛չ Ռումանիոյ ո՛չ ալ Պուլկարիոյ կառավարութիւնք յարգեցին դաշնագրութեան տրամադրութիւններն յայտնի մասին։ Այս փոքր Պետութեանց թողուած գաւառաց կալուածատերք մեծագոյն նեղութիւններ կրեցին և դեռ կը կրեն։ Այս դժբախտք կը զրկուին իրենց ստացուածքէն, զորս մեծագոյն մասամբ Պուլկար և Ռուման կառավարութիւնք գրաւելով կ'իւրացնեն։ Այս կառավարութիւնք բոլորովին անտես կ'ընեն Թուրքաց ձեռքը դտնուած կալուածական թուղթերը, թեամբք հանդերձ, եթէ Թոլպիաք իւր սեւ ձիէն քաշուած սեփական կառքին մէջ լինէր, շուտով ճանրան կը թողուր վաղեմի զրպարանը։

Բայց Թոլպիաք, վատաբաղդութեամբ, փոքր կառքի մը հանդիպած էր, զոր վախ և դժուարաշունչ դբրաստ մը կը քաշէր, և կէս քուն կառապան մ'ունէր։

Ուստի Բիէտուշ կրնար առանց ետ մնալու հետամտիլ այդ կաղ ի կաղ դնացող անպիտան կառքին։

Զինքը նեղողն ոչ թէ արագ քալելու հարկադրիչ էր, այլ իւր ծրզտական դիտաւոր։

Հագած նանքինէ տափատը, նորը մուճակները, մաշկամիդագոյն զգեստն և լայնեզր փեղջին յոյժ լաւ կը յարմարէին ճեմելու երթող քաղաքացւոյ մը, բայց ոչ երբէք բամպակի նօսրի պէս վազող քաղաքացւոյ։

Կը վախնար որ կը նշմարուէր, և իրաւունք ուներ։ Վասն զի արդէն իսկ անցորդք կանգ առնելով իրեն կը նայէին։

Կային իսկ որք ետեւէն կը դառնային։

—Վերջապէս «բռնեցէք գողը» պիտի պոռան, կ'ըսէր ինքնիրեն խեղճ Բիէտուշ։

Եւ արդարեւ, երբոր Փարիզի մէջ մարդ մը վազէ, ամենէն նուազ հետաքրքրութիւն իսկ ուշադրութիւնք կը դրաւէ, մանաւանդ երբոր այն մարդուն ոչ տարիքն և ոչ կերպարանքը չեն ներեր վազել իւր հաճոյքին համար։

(Շարունակելի)

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(83)(

ՆՈՐՔԻՒՆԻ ՏԻՒ ՊՈՒՆԱՆՊԻ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՒԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՒԻ ԿԸ ԳՈՐԾԷ

Բ.

Մինչդեռ նախորդ 29 թիւը ֆոէլին արաբքը կը հետաղտէր, նա ծանրաքայլ դէպի խճուղին կ'երթար, Պուլվարին միւս կողմն անցնելու յայտնի դիտաւորութեամբ։

Մանգամայն իւր ակնոցին վրայէն կը դիտէր իւր մօտէն անցնող մարդիկը, բայց ընդվայրայած քաղաքացին բնաւ չդրաւեց ուշադրութիւնը։

— Գուշակեր էի որ ուղղակի իւր տունը չպիտի երթար, կ'ըսէր Բիէտուշ ինքնին։ Կոտոյ փողոցն, ուր կը բնակի, աջ կողմն է, իսկ մեր մարդուկը Թիւլրիի կողմն երթալու երեւոյթ ունի։

Անգլիուհւոյն տունն ալ չերթար, որ Հօսման ծառուղին կը բնակի։

Ո՞ւր կ'երթայ։ Տեսնենք։ Շատ զուարճալի կը լինի եթէ . . . բայց լո՛ւռ. գործն այժմ մեր լրտեսութիւնն յաջողութեամբ կատարելն է։

Եւ Բիէտուշ, քիթը վար կախելով, իբր թէ խճուղւոյն կոպիճները թուել ուզէր, Պուլվարին ճախակողմն անցաւ ինքնակոչ Հոլմէն շատ ետ։

Այս վերջինն ասփալտէ սալարկին վրայ ելաւ Պուլվարին հարաւակողմն և դէպ ի Տը Լա Բէ փողոցին անկիւնն սկսաւ երթալ։

Բիէտուշ ալ նոյն ճանքան բռնեց՝ առանց խճուղին թողու։

Շատ չանցած տեսաւ որ Թոլպիաք կանգ առաւ, ժամացոյցն հանեց և ժամը նայեցաւ։

— Կ'երեւի թէ կը վախնայ ուշ մընալէ, ըսաւ ինքնիրեն նախորդ 29 թիւը։ Թերեւս սալարկին եղրն սպասող կառքերէն մին պիտի նստի։ Գործիս կուգայ այս։ Առ նուազն քսան կառք կայ ետեւէ ետեւ շարուած. անոնցմէ մին ալ ես կը նստիմ, և այսպէս փոխանակ քալելով լրտեսելու, կառքով կը լրտեսեսմ, վասն զի առջի սրունքներս չունիմ։

Բիէտուշ կը սխալէր. Թոլպիաք կառքը չնստաւ, այլ Պուլվարին անկիւնը դառնալով Տը Լա Բէ փողոցը մտաւ առանց վարանելու։

— Դնա՛, մարդուկս, դնա՛, կ'ըսէր Բիէտուշ քթին տակէն, չես կրնար կընեցնել ինձ թէ Թիւլրիի մաշկամիդիներուն տակ երթալ ճեմելու դիտաւորութիւն ունիս։ Հարկաւ տեղ մը պիտի ժամես։

Մանգամայն դիմացի սալարկն անցաւ, որպէս զի եթէ սուտ գործակատարն ետին դառնայ, չկրնայ զինքը նշմարել։ Եւ արդարեւ դարձաւ։

Մինչեւ իսկ Սիրօտէնի խանութին առջեւ կանգ առաւ, որպէս զի առիթ ունենայ ծածկաբար դննելու շրջակայքերն երթեւեկող մարդիկը։

Զնշմարելով այնպիսի անձ մը, որ կասկածելի երեւայ իրեն, նորէն քալել սկսաւ։

Իսկ Բիէտուշ փակած կեցեր էր այն ապակեայտ արկղին առջեւ, որոյ մէջ Բիւվիլիէ իւր տարաշխարհիկ գիներն ու նպարեղէններն ի ցոյց կը դնէ, և ձէնկիթի տակառիկ մը զննելու զբաղած կը թուէր։

Թոլպիաք անոր մօտէն անցնելով Ռիւ Նէօվ-Սէնթ-Օկիւսթէն փողոցը մտաւ՝ առանց ուշադրութիւն ընելու ընտիր նպարեղինաց սիրահարին։

Սուտ քաղաքացին թողուց որ քիչ մը յառաջանայ սուտ գործակատարն։

Ռիւ Նէօվ-Սէնթ-Օկիւսթէն փողոցը Տը Լա Բէ փողոցէն աւելի նեղ լինելով, չէր ուզեր իւր որսը մօտէն սեղմել։

Երբոր Թոլպիաք քսան քայլ յառաջացաւ, Բիէտուշ ալ անոր հետքը բռնեց, միշտ չափաւոր դնացքով։

Նոր Օրէլիայի ծառուղին բանալու համար դեռ սկսած չէին փլցնել այդ փողոցի տուներէն մի քանին, և դեռ կը կենար այն անկիւնի հին տունն, որոյ տակը խանութներ չկային։

Բիէտուշի համար դժուարին էր անկից անցնել՝ առանց նշմարուելու։

Ամէն հասնելէ առաջ Բիէտուշ դարձեալ թուլցուց իւր ընթացքն, և սկսաւ՝ ի չգոյէ լաւագունի՝ օթեւանաց նշանակները զննել։

Սակայն Թոլպիաք չէր շտապեր. ծանր ծանր կ'երթար պատերուն տակէն, անշուշտ պատպարելու համար ինքզինք մայիսի ջերմ արեւէն, և ոչ ես ետին կը նայէր։

Ցանկարծ Բիէտուշ տեսաւ որ քայլը փութացնել սկսաւ Ռիւ տ'Անթէն փողոցին անկիւնն հասնելու համար։ Բիէտուշ ալ նոյն ըրաւ, որպէս զի չատ հեռի չմնայ անկէ։

Զէր սպասեր յանկարծադէպ իրողութեան մը, որ իւր ճարտար հաշիւները կարճ կտրեց։

Հրապարակի կառք մը Ռիւ տ'Անթէն փողոցէն դալով Ռիւ Նէօվ-Սէնթ-Օկիւսթէն փողոցը մտաւ։

Դատարկ էր։ Թոլպիաք նշան ըրաւ կառապանին, որ կեցաւ, յետոյ կառքին դռնակը բանալով մէջը ցատկեց։

—Ա՜հ, թշուառակա՛ն, ըսաւ Բիէտուշ քթին տակէն։ Պուլվարին վրայ կառք չնստաւ, քանզի կը վախնար որ եթէ զինքը լրտեսող կար, կրնար նա ալ կառք մը նստիլ ու իւր եռեւէն երթալ։ Իսկ այժմ, որովհետեւ մեկէն աւելի կառք չկայ, բռնեց նստաւ։ Վարպետ է չարաճճին։

Կառքն, որ գոց միանստարան մ'էր, դարձաւ և ճանրան փոխեց։

Եւ մինչեւ որ ձին իւր շրջադարձն աւարտեց, Բիէտուշ անշարժ կենալու դատապարտեալ էր. եթէ կառքին մօտ հասնելու համար վազել սկսէր, Թոլպիաք կրնար կառքին ապակիներուն ետեւէն նշմարել և հետեւաբար խորհիլ թէ ինչո՞ւ յանկարծ վազել կ'սկսէր այդ քաղաքացին, որ ցարմամբ հանդարտ կը քալէր։

Խեղճ Բիէտուշ հարկադրեցաւ քանի մ'երկվայրկեան համբերել, և քիթն ընդօդ և ականջն ի լուր կեցաւ՝ օթեւանայ նշանակները կարդալով և ունկն դնելով թէ կրնա՞ր արդեօք ըսել անիւներու թաւալման շռնդիւն մը, որ կառքի մը նախախնամական գալուստն աւետէր իրեն։

Բայց փոզոցն այնչափ լռի՛ էր, որչափ ամայի։ Օդը սաստիկ տաք էր, և իրենց նատարանին վրայ նիրհող կառապանը դիւրաւ չէին մեկներ իրենց կայարանէն և դիպուածաբար յաճախորդ մնառելու երթալ։

Ուստի բոլորովին արտասովոր բաղդաւորութեամբ մ'էր որ Թոլպիաք հանդիպած էր այն կառքին։

Այժմ այն կառք՝ կրնակը Բիէտուշի դարձուցած՝ դէպի Պուլքի հրապարակը կ'երթար։

Դժբաղդ հետամուտն ոչ եւս կը յուսար որ երկինք իրեն ալ կառք մը ղրկէր. ուստի արիաբար որոշեց իւր ընելիքն, և սկսաւ հետապնդել կառքին։

Կառք մը լրտեսել հետի քալելով, թերեւս երբէք տեսնուած բան չէր ոստիկանութեան տարեգրութեանց մէջ։ Փորձելու համար Բիէտուշ պէտք էր լինել։

Բայց այս չարաճճին դիմուորական կառապանց գունդէն եղած չէր իւր Բիկաշ բարեկամին պէս, և երկար ու արագ քալելու համար ձիու կամ կառքի պէտք չունէր։

Մովային հետեւակազօրաց գունդին մէջ ծառայած էր ի Քոչինչին, ի Սենեկալ, և այլ առապարին կամ դրժուարակոխ տեղեր, ուր հանդրուանք տկար և տաժանելի են։

Փրանսա վերադառնալէն ետքն ալ, Փարիզի փոզոցներուն մէջ չարագործաց հետապնդելու հանապազօրեայ սովորութիւնը գերազանց վիճակի մէջ պահած էր զայն, ինչպէս կ'ըսեն արշաւական ձիոց համար։

Իւր սրունքն երկաթէ էին, կարթերը պողպատե և կուրծքը կրնար մրցիլ դարբնարանի փիւրցի մը հետ։

Սակայն, այս ամեն առաւելութեամբ հանդերձ, եթէ Թոլպիաք իւր սեւ ձիէն քաշուած սեփական կառքին մէջ լինէր, շուտով ճանրան կը թողուր վաղեմի զրպարանը։

Բայց Թոլպիաք, վատաբաղդութեամբ, փոքր կառքի մը հանդիպած էր, զոր վախ և դժուարաշունչ դբրաստ մը կը քաշէր, և կէս քուն կառապան մ'ունէր։

Ուստի Բիէտուշ կրնար առանց ետ մնալու հետամտիլ այդ կաղ ի կաղ դնացող անպիտան կառքին։

Զինքը նեղողն ոչ թէ արագ քալելու հարկադրիչ էր, այլ իւր ծրզտական դիտաւոր։

Հագած նանքինէ տափատը, նորը մուճակները, մաշկամիդագոյն զգեստն և լայնեզր փեղջին յոյժ լաւ կը յարմարէին ճեմելու երթող քաղաքացւոյ մը, բայց ոչ երբէք բամպակի նօսրի պէս վազող քաղաքացւոյ։

Կը վախնար որ կը նշմարուէր, և իրաւունք ուներ. վասն զի արդէն իսկ անցորդք կանգ առնելով իրեն կը նայէին։

Կային իսկ որք ետեւէն կը դառնային։

—Վերջապէս «բռնեցէք գողը» պիտի պոռան, կ'ըսէր ինքնիրեն խեղճ Բիէտուշ։

Եւ արդարեւ, երբոր Փարիզի մէջ մարդ մը վազէ, ամենէն նուազ հետաքրքրութիւն իսկ ուշադրութիւնք կը դրաւէ, մանաւանդ երբոր այն մարդուն ոչ տարիքն և ոչ կերպարանքը չեն ներեր վազել իւր հաճոյքին համար։

(Շարունակելի)

կամ զանազան պարուականներով զբաւեալ կը պահեն անոնց հողերը։ Թուրքերն այս պատճառաւ մեծ թշուառութեան մէջ ընկած են, և չատեր մուրացկան դարձած են բացարձակապէս։ Քանի մը մեծ ագարակներ և դաւառաց մօտ կառուցեալ կարեւոր շէնքեր ապօրինապէս զրաւուեցան, թէեւ ժառանգական իրաւամբ կը պատկանէին բարձրատիճան թուրք պաշտօնատարաց։ Բ. Դուռը կ'ըսէ որ եթէ այսպիսի պարագայից մէջ իսկ բնաւ յարգանք ցոյց չտրուի օրինական իրաւանց, կրնայ գուշակուիլ թէ Թուրքաց ազգատ դասերն ո՛րպիսի կեղեքումներու ենթարկուած են Պուլկարիոյ եւ Ռումանիոյ թողուած գաւառաց մէջ։ Բ. Դուռը մտադիր է ծանր շահուց դպչող այսպիսի խնդիր մը ներկայացընել Պերլինի Դաշնագիրն ստորագրող Տէրութեանց, ըստ որում Պուլկար եւ Ռումանն կառավարութեանց ընթացքն պայծառապէս կ'երեւի թէ անոնց դիտումն է ամբողջովին գրաւելով իւրացնել Թուրքաց բոլոր կալուածներն որք այդ Պետութեանց երկիրներուն մէջ են։ Բաց ասսի, Բ. Դուռը խնդրած է Պերլինի Դաշնագիրն ստորագրող Տէրութիւններէն, որ միջոցներ ձեռք առնուն պարտաւորելու համար Սերպիան, Ցունաստանը, Պուլկարիան եւ Գարատաղն, որ Օսմանեան պարարքէն իրենց բաժնին ինկած մասերն սկսին հասուցանել։

ՌՈՒՍԻԱ. Բեդրսպուրգի զրկուած հրամանաց վրայ, Ռոստովի քաղաքին մէջ իբր 80 անձինք ձերբակալուած են, յորս կան քանի մը ազնուականներ և դեղեցիկ սեռի անդամներ։ Կը կարծուի ընդհանրապէս թէ այս ձերբակալութիւնը հետեւանք են Ալեքսանդրայ մէկ նոր դաւադրութեան երեւան ելնելուն։

—Օրթոտոքս եկեղեցիէն բաժնուողներու թիւն հետզհետէ աճելուն պատճառաւ, այս շարժման առաջն առնու համար օրթոտոքս նոր եղբայրակցութիւն մը կազմակերպուած է Թոմսքի նահանգին Պիէք քաղաքին մէջ, ձեղբայրակցութիւն Ս. Տիմիթրեայ անուամբ և նպատակ ունենալով պաշտօնական կղերին օժանդակել՝ ազնաբարոյ աճումն և ծաւալումն արգիլելու համար։

ԳԵՐՄԱՆԻԱ. Գերմանիա թէ՛ Արեւելից և թէ՛ գաղթականութեան վայրերու հետ իւր յարաբերութիւնները կ'ամրացնէ և կը զօրացնէ։ Պիզմարք իշխանը Դաշնակցային Խորհրդին ներկայած է երմացոյցի ծրագիր մը, յորում կը յայտնուի թէ Պերլիրաի գերմանական ներկայացուցիչն երկրորդ կարգի դեսպանութեան աստիճանը պիտի բարձրանայ, մնայուն դեսպանութիւն մը պիտի հաստատուի Թէհրանի մէջ, Բարեյուսոյ քաղաքին (Քաք Թաուն) մէջ ընդհ. հիւպատոս մը պիտի հաստատուի, և ուրիշ հիւպատոսութիւններ ի Բօրդօ Ալէկրօ, Զանզիպար և Սմաթոլ։

ՄԱՔԷՆԶԻ ՈՒԱԼԼԱՍ. Թայմս լրագրոյ աշխարհածանօթ թղթակից Գ. Մաքէնզի Ուալլաս Փոխարքայ Լորտ Տըֆրինի հետ Հնդկաստան կ'երթայ իբրեւ քաղաքական քարտուղար Ն. Վսեմութեան։ Մ. Մաքէնզի Ռուսիոյ վրայ երկու հատոր ընտիր գիրք մը հեղինակած է, երկար ժամանակ Ռուսիոյ մէջ թղթակցի պաշտօն վարելէ և երկրին լեզուն ու բարքերն ուսումնասիրելէ յետոյ։ Թուրքիոյ և Թուրքիստանի զանազան ազգութեանց վրայ եւս վեց տարիէ ի վեր կ'աշխատէր նմանօրինակ գիրք մը հեղինակելու։ Գոհացուցիչ է իմանալ թէ Գ. Մաքէնզի, թէեւ առ այժմ կը թողու թղթակցական պաշտօնն, և քաղաքական պաշտօն մը կը սանձնէ, չէ լքած իւր այս վերջին աշխատութիւն, զոր Լոնտոն վերադառնալէն յետոյ պիտի ամբողջացնէ 3–4 տարիէն։

ՀԱԼԲՈՆ. Հարոնի կառավարութիւնն հիմնեց ազգային ազնուականութիւն մը, որ կը պարունակէ 11 Իշխան, 24 Մարքիզ, 76 Կոմս, 324 Դերեկոմս եւ 74 Պարոն։ Դրժբախտաբար Դքսութիւնը մուցուած է։ Այս նորակարգ ազնուականը Հարոնի Խորհրդոյ բանին մէջ Ծերակոյտ մը պիտի կազմեն։ Այս ազնուականութիւն ժառանգական պիտի լինի արական ճիւղին մէջ։ Ազնուական տիտղոսք իրաւունքները սահմանուած են, ինչպէս նաեւ ազնուականաց ազգականներուն, եւ որոշուած է թէ ազնուականը Կայսերական Պալատն Նախարարէն յատուկ արտօնութեան կը կարօտին ամուսնութիւն կնքելու կամ զաւակներ որդեդրելու համար։—Բերսիի լրագիրը ունենք ծանուցին թէ ազնուականութիւն մ'ալ Թուրքիոյ մէջ պիտի հաստատուի։ բայց ստուգութիւն չը գտաւ։

ՍՈՒՏԱՆ. Լորտ Ուոլսլիի անգլիական զօրախումբն, որ Նեղոսն ի վեր կը նաւարկէ Կարտոն զօրավարն ազատելու համար, իւր տենդեան համար շատ մը պաշար կը տանի, որոյ ցանկն հետաքրքրաշարժ է։—1,659,000 լիտրա աղած կոմս միս։ 153 հազար՝ թարմ միս խնամով պահուած։ 134 հազար՝ խոզի իւղ։ 52,800՝ պանիր։ 13,400՝ մեղ ջուր։ 1,566,000՝ սովորական պաքսիմատ։ 192,000՝ բարձրագոյն տեսակէ պաքսիմատ։ 160,000՝ ալիւր։ 192,000 շաքար։ 79,000՝ թէյ։ 134,000՝ պահուած բանջարեղէն։ 53,000՝ աղ։ 3,300՝ պղպեղ։ 13,600՝ անուշեղէն։ 7'000 կալոն լիմոնի հիւթ։ 1,055,500 հատ ռոմիկի (Բայէ)համար պահուած թան։ 13,600՝ քաղցրաւենի (բէնէ)։ 500՝ մեղ հիւթ։ 20 հազար՝ խոհուէ։ 50,000՝ պահուած բաղադէս։ 30,000 կալոն ռում։ 1,000 չիշ Բորդոյի գինի։ 1,000 չիշ քոնեաք։ 2,000 չիշ թուս գարեջուր եւ 2,000 չիշ սեւ գարեջուր։ 1,000 չիշ շամպանիա։ եւ 16,000 տուփ կաթի հիւթ պահուած։—Անգլիացիք փոխանակ պատերազմի եթէ խնճոյքի մը պատրաստութիւն տեսնէին, լաւագոյն կարգադրութիւն մը չէին կրնար ընել։ Մեր երկի թուով հրատարակեալ հեռագիրը մը գիշերապէս կը ծանուցանէր թէ այս պաշարը ասնող նաւերէն մի քանին ընկղմած են Նեղոսի մէջ։

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ, Իւթիւճեան Մեծ. Կարապետ էֆէնտի, որոյ առողջական վիճակն զգալապէս բարւոքած է, յետ այսորիկ կարող պիտի լինի նոյն աշխատութիւնը նուիրել «Արեւելք» ի, զոր յառաջագոյն կը նուիրէր «Մասիս» օրաթերթին։ Իւթիւճեան էֆէնտի, Լրագրոյս վէպը միշտ ինք թարգմանելէ զատ, թէ՛ «Արեւելք»ի և թէ՛ «Մասիս» շաբաթաթերթի ազգային և ներքին լրոց խմբագրութիւնն եւս աչքէ պիտի անցունէ, այն ճարտարութեամբ զոր իւր ամեն գրական աշխատութեանց մէջ երկար ժամանակէ հետէ ցոյց տուած է։ Տարակոյս չունինք թէ այս նոր կարգադրութիւն մեծապէս պիտի գոհացընէ մեր ընթերցողները։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Արդէն ծանուցինք թէ հոգելոյս Տ. Ներսէս Պատրիարքի կտակաձեւ հրաժարագրոյն մէջ առ Վեհ. Սուլթան յայտնուած երախտագիտական զգացումները Պատրիարքարանի կողմէ ներկայացուած են Բարձր. Մեծ–Եպարքոսին, Վեհ. Սուլթանին մատուցուելու համար։

Այժմ կ'իմանանք թէ Բարձր. Մեծ–Եպարքոսն պաշտօնական գիր մը ղրկած է Պատրիարքաց, ծանուցանելով թէ հոգելոյս Պատրիարքին զգացումները ներկայացուցած է Վեհ. Սուլթանին, և Ն. Սրբազնութեան վախճանման առթիւ ցաւակցութիւն յայտնած է։

Բ. Դրնէն մինչև երեկ իրիկուն Պատրիարքարան պատասխան եկած չէր՝ պատրիարքական տեղապահութեան կարգադրութիւնը ծանուցանող տեղեկագրոյն համար, որ՝ ինչպէս յայտնի է՝ Խառն ժողովոյ անդամոց ստորագրութեամբ կիւրակէ օրը ղրկուեցաւ Բ. Դուռը։ Կը կարծուի, թէ տեղեկագիրը նոյն օրն ուշ հասած լինելով՝ նախարարաց ժողովին մատուցուած չէ, և այս աւուր նոյնին պիտի մատուցուի։

Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վախճանման համար ցաւակցութեան նոր նամակ և հեռագիրք։

Ասաբաղարի թաղական համախումբ ժողովոյ կողմէ ցաւակցութեան նամակ։

Պանտիրմայի առաջնորդական տեղապահ Տ. Մեղքիսեդեկ քահանայի կողմէ նամակ, որով կը ծանուցանէ միանգամայն թէ գաւառն ամեն կողմանց վարժարանք փակեցան ի նշան սգոյ, և եկեղեցեաց մէջ հոգեհանգիստներ հանդիսաւոր պաշտօն կատարեցաւ։

Բուսճուգի առաջնորդական տեղապահ Գրիգորեան Տ. Յովհաննէս վարդապետ նամակ, յորմէ կ'իմացուի թէ Պուլկարիոյ բոլոր հայաբնակ քաղաքներն հեռագրեր է Տ. Ներսէս Ս. Հօր վախճանը, և գրեր է որ հոգեհանգիստներ պաշտօն կատարեն եկեղեցեաց մէջ։

Պուրսէչի ազգային հոգաբարձութեան նախագահ Թովմասեանց Մ. Դէսրդ աղայէ նամակ, յորում կը գրէ թէ մեծ ցաւ զգացին համայն Բուսնանական Հայք, և ծանուցուեցաւ Բուսմանիոյ բոլոր Հոգաբարձութեանց և պաշտօնէից, որ աղօթք մատուցանեն վասն հոգւոյ հանգուցեալ Ս. Հօր։

Հեռագիր Տիփլիսէն.

«Ստորագրեալքս, երախտագէտ հայրենակիցքս, կը յայտնեմք մեր վշտակցութիւն Ամեն. Տ. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վախճանման համար, որոյ անունն Հայ Ազգին ժամանակից պատմութեան ամենամեծ իրողութիւններէն անբաժան պիտի մնայ։»

Տօքթոր Աւետիս Արսխանեան
Սողոմոն Եղիազարեանց
Ռաֆֆի
Տիգրան Նազարէթեանց
Տօքթոր Գրիգոր Վարդանեան
Փիլիպոս Վարդանեան
Ներսէս Արեւելեան
Գարբիել Միրզոյեան
Ա. Լասյէֆ

Ցաւակցութեան այս ամեն գրերէն ու հեռագրերէն զատ, որ հետզհետէ կը հրատարակուին, հանգուցեալ Ս. Հօր տունն ալ վշտակցութեան նամակ և հեռագիրք կը հասնին շարունակ Թուրքիոյ ամեն կողմերէն և օտար երկիրներէ։

Հոգելոյս Ներսէս Պատրիարքի մահուան առթիւ Աստրախանէն հետեւեալ ցաւակցական հեռագիրն ուղղուած է առ Ազգային Ժողովն։

«Ցաւօք սրտի լսելով Ներսէս Պատրիարքի անակնկալ մահն, Աստրախանի հայազգի հոգեւորականութիւնն և ժողովուրդն այսօր հոգեհանգիստ կատարեց։ Այս անփոխարինելի կորստեան համար յայտնելով Ազգային ժողովիդ իւր վշտակցութիւն, մաղթում է Յաստուծոյ նորան արժանաւոր յաջորդ ի վսեմութիւն Ազգիս»։

Ի Դիմաց հոգեւորականաց
Սոֆէոս Եպիսկոպոս
և ի Դիմաց ժողովրդեան
Երեսփոխան Մելչիսէդեկ

Այս կիրակի օր Զմիւռնիոյ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագէն զկնի հոգեհանգստեան պաշտօն կատարուեր է վասն հոգւոյ երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի։ Սովորականէն աւելի բազմութիւն ներկայ գտնուեր է և Գեր. Առաջնորդ Մուրատեան Սրբազան՝ քարոզ խօսելով դրուատեր է հանգուցեալ Պատրիարքի բարեմասնութիւններն ու յիշատակն։

Կրօնական ժողովն իմանալով թէ Մալաթիոյ փոխ–առաջնորդ Տ. Մաղաքիա վարդապետ հրաժարած, և առանց Պատրիարքարանի գիտութեան ժողովուրդը լքանելով եղած Տիարպէքիր գնացած է, հեռագրով հրաման ղրկեց առ յիշեալ վարդապետն, որ փութայ վերադառնալ Մալաթիա ժողովրդեան քով։

Ցաւօք կ'իմանանք թէ Մոսկուայէն Տ. Յակոբ քահանայ Սուրէնեանց, որ հանրածանօթ է իւր ազգասիրութեամբ, իւր հրատարակութեամբք, և որ այնքան նպաստած է Կ. Պոլսոյ հայ ընկերութեանց՝ Ռուսիոյ մէջ հանդանակութիւններ բանալով, հոկտեմբեր 13 ին վախճաներ է։ Յուղարկաւորութիւնն և թաղումը կատարուեր են մեծ շքով և հանդիսիւ։

Անկիրայ 3–4 ամիս առաջ, մասնաւոր թղթակցութենէ մը առնելով գրած էինք, թէ Քիլիսի (Կիլիկիոյ վիճակ) մօտակայ ջրաղացի մը մէջ Հայ վարդապետ մը սպանուեր է, և չորս Սասունցիք իրրև կասկածելի ձերբակալուեր ու քննութեան ենթարկուեր են։ Այժմ կիմանամք թէ սպանութեան ոճիրը դատաստանաւ հաստատուելով այն չորս անձանց վրայ, մին գլխատման, իսկ երեքը միանկենաւոր շղթայակապ բանտարկութեան դատապարտուեր են, և թէ այս ծանր ոճրին շարժառիթ եղած է վարդապետին վրայ գտնուած 300 լիրան կողոպտելու տենչը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՆ

Այս առաւօտ հետեւեալ պաշտօնական ազդարարութիւնը Բ. Դռնէն հաղորդուեցաւ հայ լրագրաց։

Երմէնիէ թաղ ու նէյր օլուռան էվրադը հավասիս միյանընտա Բաթրիքլիք մէ մեդիէյ մէսէլէրինէ տայիր իտիլէն միւսլիմանի հատոր մատուրիտու թէհավազ իթմիշ օլմաղլա, պատէտա պու եօլտա միւսլիմ պէնտէր նէյրի պա էմրի սամի գաֆէն մէն օլունմուշ տուր։ Ֆի 29 մուհարրէմ սէնէ 302 մէ Ֆի 6 թշրին սանի սէնէ 300։

Թարգմանութիւն

Հայերէն լրագրաց միջոցաւ Պատրիարքութեան և կրօնի խնդրոց վրայ հրատարակութիւնը չափն անցած լինելով, յետ այսորիկ այդ կարգի յօդուածոց հրատարակումն արգիլեալ է Եպարքոսական հրամանաւ։

6 Նոյ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ

Իւլայի առաջին աստիճան տրուեցաւ տրոց վարչութեան անդամներէն Պէհա պէյի։

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ Հռոմի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Միհրան էֆէնտիի։

Պետական խորհրդոյ նախկին անդամ Հայտար էֆէնտի՝ կրթական նոր բակարմ բարձրագոյն խորհրդոյ նախագահ անուանեցաւ։

Բիւշրիէ վարժարանաց նախկին տնօրէն Սելիմ էֆէնտի, կրթական նախկին խորհրդոյ քարտուղար Ազիզ պէյ, Եւմական խորհրդոյ անդամ Հիլմի պէյ և Ներքին գործոց նախարարութեան նախորդ քարտուղարներէն Ահմէտ պէյ, անդամ անուանեցան յիշեալ խորհրդոյ։

Երէկ, Հալէպէն առ մեզ ուղղեալ հեռագրէ մը առնելով ծանուցինք թէ Ամիրի գեղին վրայ չենուած նոր կամուրջը փլեր է կէսէն աւելի։ Ըստ նոր բագոյն տեղեկութեանց, այս արկածին պատճառ եղած է սարսափելի ողողումը, որ քար ու քանդ ըրեր է գաւառին հիւսիսային արեւմտեան մասը։ Բազում անձինք և արջառք կեանքերնին կորուսեր են, գլխաւորաբար եղջերաւոր կենդանիք և ուղտք։ Հեղեղք հազարաւոր ծառեր արմատախիլ ընելով քշեր տարեր են։

Նիքոլայէվիչ Մեծ Դուքսն երէկ երեկոյ մեկնեցաւ մայրաքաղաքէս, Օռէսայի ճանրով Բեդրսպուրգի ուղեւորելու համար։ Երկուշաբթի երեկոյ պալատան մէջ տրուած ճաշէն յետոյ, Նորին բարձրութիւնն եղբօրդի պարտիզին մէջ իւրեն համար յատկապէս պատրաստեալ Բէօշկ մը քաշուեր է, ուր Վեհ. Սուլթանն երէկ առաւօտ փոխադարձ այցելութիւն տուեր է նմա։

Անգլիոյ երեսփոխանաց ժողովոյ նոյեմբեր 13 ի նստին մէջ արտաքին գործոց նախարարի խորհրդական լորտ Ֆիէ Մորիս յայտարարեր է թէ՝ Բրիտանական կառավարութիւնը դիտաւորութիւններ ըներ է Օսմանեան կառավարութեան Փոքր–Ասիոյ մէջ ներմուծելի բարենորոգմանց համար, և թէ Կ. Պոլսոյ Անգլիական դեսպանն այս նկատմամբ նոր հրահանգներ պիտի ստանայ ի մօտոյ։

Ըստ մասնաւոր տեղեկութեանց Մոնթիէորի, Կայսերական կառավարութիւնը կը պնդէ եղեր թէ հարկ է տասն աւուր վերածել Սեվաստոբոլէն եկող նաւուց համար հատատաեալ հնգօրեայ քարանթինան. իսկ առողջապահական միջազգային խորհուրդը միշտ կը նդիմանայ այս տեսութեան։

Կայսերական կառավարութիւնը յանձնարարեր է նաւահանգստի վերատեսուչ Տիլալէր փաշայի, հսկել առողջապահական տնօրէնութեանց գործադրութեան։

Քավագի մաքրանոցին կահաւորման և պատրաստութան համար ամեն միջոցք ձեռք կ'առնուին։ Մաքրանոցի տեսուչ էշրէֆ էֆէնտի և քննիչ, յատուկ յանձնաժողովոյ մը հետ կաչառին մաքրանոցն այնպիսի վիճակի մէջ դնել որ ուղեւորք կարենան քարանթինա սպասել անդ։ Կրակարանները և անկողիններ զրկուած են և յառաջիկայ շաբթու ամեն ինչ պիտի ամբողջանայ։ Մինանգամայն լաստակամուրջ մը պիտի դրուի հիւանդ ուղեւորաց դիրութեան համար։

Առողջապահական ընդհանուր քննիչ Պարթօլէթի էֆէնտի երկուշաբթի Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ արտաքին գործոց նախարար Ասիմ փաշայի հետ որ յիշեալ վարչութեան պատասխանալ նախագահն է։

Վիէննայի առողջապահական վերին ճանաչաժողովն իւր վերջին նստին մէջ զբաղեր է քոլերային դէմ ձեռք առնուելիք ընդհանրական միջոցներու խնդրովն։ Այս տնօրինութիւնք կախում ունին գլխաւորաբար Ֆրանսայի, Զուիցերիոյ և Գերմանիոյ ձեռք առնելիք միջոցներէն։ Ցիշեալ խորհուրդն որոշեր է նախ և առաջ ամենախիստ հսկողութիւն մ'առաջարկել Զուիցերիոյ և Գերմանիոյ սահմանագլխոյ կայարաններուն վրայ։ Ցաւալի ուշադրութեան առարկայ եղեր է Բարիզի և Կ. Պոլսոյ միջեւ երթեւեկող ճեպընթաց կառաքարուն, և խնդիր ծագեր է թէ հարկ չէ՞ արդեօք դադրեցնել այս երթեւեկութիւն. առ այժմ Աւստրիոյ այն ամեն կայարանաց մէջ ուր կանգ կառնու ճեպընթացն, Ուէյսի, Լինցի և Վիէննայի մէջ, առողջապահական քննութիւն մը պիտի կատարուի թէ ուղեւորաց և թէ ապրանաց համար։

Զէթիեանէն նոյ. 12 թուով կը հեռագրեն թէ Դարատաղի Կ. Պոլսոյ դորժակատար Պ. Վուլքովիչ նոր ծանուցագիր մը մատուցեր է Բ. Դրան, որով կը պնդէ թէ հարկ է վերջնապէս կարգադրել սահմանագլխոց ճշդման խնդիրն։

—

Բարի–Պուրս եղմական թերթը կը գրէ թէ Խալաչցի դրամատեարց խումբ մը ձեռնարկներ կընէ Բ. Դրան քով որպէս զի արտօնութիւն ստանայ Սելանիկէն մինչեւ Ադրիական ծովու եղերքն երկաթուղի մը շինելու։ Առաջին անգամն է որ այս տեսակ ձեռնարկութեան մը խօսք կը լինի։

Կը յիշուի թէ կայսերական կառավարութիւնը մտադիր է 100,000 ոսկւոյ փոխառութիւն մ'ընել Օսմանեան Պանքայէն, ոչխարաց (աղնամ) տուրքը տալով ի փոխարէն։ Սգամպուլ կրսէ թէ Բարձր. Մեծ Եպարքոսը խնդիր տուեր է այս մասին կատարուած բանակցութիւնները, դիտել տալով թէ լաւագոյն կը լինի միանգամէն փոխառութիւն մ'ընել բոլոր ծախուց բաւականացող, փոխանակ հետզհետէ յանձնարարուելիք ըներ վճարելու, մանաւանդ որ միակ փոխառութեան մը հսկողութիւնն աւելի դիւրին կը լինի քան մասնամասն փոխառութեանց։

Իսկ Հալալէներու խնդրոյն գալով, կը յարէ Սգամպուլ, որոշուած է այդ մասին որ եւ է տնօրինութիւն յետաձգել մի քանի շաբաթ, բայց այս խնդիրը պիտի կարգադրուի որ և է փոխառութենէ առաջ, որպէս զի փոխատուք հարկադրին աւելի բարձր գներով գնել հալալէներն, յորոց պիտի բաղկանայ կայսերական դանձուն վճարելի դումարին քառորդը։

Շուէյտի և Նորվեկիոյ կառավարութեան կողմէ Վաղայէ երկրորդ պատուանշան տրուեցաւ Կայսերական դիւանի թարգման Ցալուտ էֆէնտիին։

Հեռագրաց և թղթատարութեանց տնօրէն Խոզէթ էֆէնտի, ապաքինած լինելով, իւր պաշտօնին գլուխն անցած է։

Կ. Պոլսոյ Ֆրանսական հիւպատոս Պ. Կաղէ վերադարձաւ Իզմիրէն։

Բերայի պաշտօնական ակմբոց մէջ կը կարծուի թէ, կ'ըսէ Ֆար, ափրիկեան Դեսպանախորհուրդն, որ կը գումարի այժմ ի Պերլին, պիտի զբաղի նաև եգիպտական խնդրով։

Բայց այս տեղեկութիւն անհիմն կ'երեւի։

Խեդէրն էֆրբրէս հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Լոնտրայի ընթերթալի յոյն դրամատան վրայ, որոյ մնանկութիւնն հրատարակեցաւ արդէն.

Բազում տարիներէ հետէ Արեւելից հրապարակին վրայ այսքան մեծ մնանկութիւն մը չէր տեսնուած։ Լոնտոնի Սթարթալի դրամատունն, որ յիսուն տարուան հաստատութիւն մ'է, Արեւելից առաջին դրամատուններէն մին էր և մեծ վարկ ունէր։ Արեւելեան գրեթէ բոլոր մեծ վաճառականց նման իւր գործառնութիւնները սահմանափակ չէին և յարաբերութիւններ ունէր մինչև ի Ծայրագոյն Արեւելս։ Գլխաւոր գործն էր ապրանաց ներածումն և արտածումն, յանձնարարութեամբ, բայց Սթարթալի վաճառատունն իւր հաշուոյն մեծ գործեր կընէր արմուեաց վրայ։ Այնքան լաւ համաւ ունէր որ իւր փոխանակագիրք Լոնտրայի հրապարակին վրայ առաջնակարգ տեղ մը կը գրաւէին։ Կերեւի թէ արմուեաց վրայ մեծ գործեր ըրած էր եւ աշխատ սկիզբը գնոց անկմամբ վնասուած։ Կրսուի թէ այն ժամանակ սկսաւ պորսական գործողութիւններ կատարել բացը գոցելու համար, բայց չյաջողեցաւ եւ վճարքը դադրեցուց։ Ինչ վերջին խնացուեցաւ թէ պարարքերը չպիտի հաստատուէր եւ պիտի լուծուէր։

Այս մնանկութիւն 71,336 ոսկւոյ չափ վնաս մը տուած է Ղալաթիոյ հրապարակին, որոյ 40,000 ոսկին միակ վաճառատան մը (Տ. Բ. և Ընկ.) և մնացեալն ուրիշներու։ Օսմ. Կայսերական Պանքան 3000 ոսկւոյ փոխանակագիր ունէր Սթարթալի տան կողմէ ընդունուած, բայց այդ թղթերը ուրիշ տարագրութիւն կը կրեն և երաշխաւորեալ են։ Իսկ միւս դրամատունք աւելի քիչ վնաս կը կրեն։ Փրէսի Լիոնէ 250 ոսկի, Սոսիէթէ Օթման 600 ոսկի և Պանք տը Քանսթանդինօբլ 1500 ոսկի։ Մնացեալ 22,000 ոսկին տեղական վեց պատուաւոր և հաստատուն տանց վրայ բաժնուած են։ Այսպէս, բացի մէկ վաճառատունէ, որոյ դրամատան ընդհանուր ցաւ պիտի պատճառէ, մնացեալ վնասը չցնցեր մեր հրապարակը։ Կը մնայ գիտնալ թէ Թուրքիոյ առեւտրական միւս կերդուններն ո՞ր աստիճան վնաս կրած են։ Տարակոյս չկայ թէ իրմէր առաջին տեղը կը բռնէ, բայց կը կարծուի թէ հոն ալ վնասներն այն աստիճան ստորաբաժանեալ լինին, որ զգալի չլինի։

Մինչեւ վերջին դժնդակ վայրկեանն, Սթարթալի վաճառատունն հարուստ կը կարծուէր։ Անդրանիկ Սթարթալի երկու որդիք կը վարէին զայն, և հայրենին գործէ քաշուած էր մի քանի տարիէ հետէ։ Երկու տնօրէններն հարուստ կանոց հետ ամուսնացած են։ Պարարքը 600,000 անգլիական ոսկի կը հաշուի, որ պահանջին հետ բաղդատելով մեկ անգլիական ոսկւոյ փոխարէն տասն և մեկ չիլին կը մնայ, այսինքն հարիւրին 55, որ գոհացուցիչ կարգադրութիւն մը չկրնար նկատուիլ այսպիսի կարեւոր տան մը համար»։

Իսկ Սգամպուլ, հակառակ Էքսբրէսի այս տեղեկութեանց, մասնաւոր աղբիւրէ կիմանայ թէ Կ. Պոլսոյ հիւպատոսարանի մը կողմէ օտար երկրի մը առեւտրական Սենեկին ուղղեալ տեղեկագիր մը, յետ մանրամասն քննութեան, ամենատխուր դոյներով կը նկարագրէ Ղալաթիոյ հրապարակին կացութիւնը։

Յունաց Ամեն. Պատրիարք Տ. Յովակիմ Դ. նախընթաց օրը Բերա, Պ. Սգէֆանովիչի տունն երթալով, անդ ճաշեց։ Ապա այցելութիւն տուաւ Գաբատաղի գործակատար Պ. Վուլքովիչի։

Անգլիական դեսպանատան առաջին թարգման Սըր Այֆրէտ Սանտիսըն իւր բնակութիւնը Թարապիոյ ամարանոցն Բերա փոխադրեց։

Կրսուի թէ մէկ միլիոն ղրուշի արժողութեամբ կեղծ դրամ մաքուցեր է։ Նոյնպէս հրապարակին վրայ։ Ասոնք Սօֆիայի մէջ պատրաստուած են եղեր։ բայց տակաւին պաշտօնական աղդարարութիւն մը չկայ։

Կրթական պաշտօնատան մէջ կազմեալ նախարարական ծանաչաժողովն, որ կը զբաղի այդ ճիւղի բարենորոգման խնդիրներով, կրթական բարձրագոյն խորհուրդ մը կազմած է, որոյ պաշտօնը պիտի լինի բարենորոգմանց գործադրութիւնը։

Վառնայէն նոյեմբեր 8 թուով Եւրոպիոյ լրագրաց ուղղեալ Հավասի հեռագիր մը սա. պէս կամփոփէ պարոն Հիրշի կողմէ առ Բ. Դուռն ուղղեալ նամակն որ կը մերժէ նորա առաջարկներն։

Ընկերութիւնը կը խնդրէ որ իրաւահաստատ դատարան մը կազմուի, որ երկու կողմանց պահանջները քննէ թէ՛ անցեալն և թէ՛ ներկայն համար, բայց կը յայտնէ թէ ինք պատրաստ է միացման գիծերը շինել հարկ եղած կանխավճարներն ընելով 0|0ին 7 ով, որոյ 0|0ին 1ը գլխավճարին պիտի յատկանայ։ Ընկերութիւնը կը խոստանայ այս գումարն երկաթուղւոյ եկամուտներէն միայն վերստանալ և կերաշխաւորէ թէ միացման գծերու շինութիւնը քիլոմէթրի վրայ 200,000 ֆրանքը չպիտի անցնի և յանձն կառնու կառավարութեան շահ հանել, եթէ նուազ ծախքով կատարուի։ Ի վերջոյ կըսէ թէ ընկերութիւնը պատրաստ է իւր նախապատուութեան իրաւունքէն հրաժարիլ, եթէ Բ. Դուռն ուրիշ ձեռնարկուաց դիմէ։

Ընկերութիւնը կը պնդէ միայն թէ բացարձակապէս տարբեր նկատուին այս նոր գործն և այն առկախ խնդիրք որք իրաւահաստատ դատարանին պիտի ենթարկուին։

Ադրիանուպոլսոյ կուսակալութեան Վիզա գաւառակին Իսքիրասթօ անուն գիւղին մէջ անցեալ հոկտեմբեր ամսոյ 17ին գիշերը խումբ մը չարագործք Բուլիխրոն անուն մարդու մը դուռը ձեռք կ'առնուն և պարգեւներ կը պահանջեն։ բայց դուռը չբացուիր։ Ցանտիրոջ տղան Քոսթի՛ խկոյն հրացան մը կը պարպէ որպէս զի գիւղին մէջ գտնուող ոստիկանաց խումբը լսէ և զիրենք ազատելու գայ։ Թէեւ ոստիկանութեան փողին ձայնը կը լսուի, բայց ոչ ոք չերեւիր։ Չարագործներն, որ պահ մը վախնալով պահուրտած էին, տեսնելով որ պաշտօնական մարմին մը երեւան չելներ, դուռը կը կոտրեն և ներս մտնելով տանտէրը կազով այրել կսկսին և այս կերպիւ երեւան հանել կուտան նորա ունեցած բոլոր հարստութիւնն, որ հագիւ 4–500 ոսկւոյ կը հասնէր։

Չարագործներն այսչափը բաւական չհամարելով՝ տան մէջ բնակողներուն ամենքն ալ, մինչեւ իսկ նոր մայր եղած հարսն ու մանկիկը կառնուն մնտակայ անտառ մը կը տանին։ Ընտանեաց միւս անդամներն անդ թողով, հայրն ու որդին կը բռնեն աւելի հեռուները կը տանին։ Ապա որդին հոն պահելով հայրը թող կուտան որ երթայ 300 ոսկի ևս բերէ իրենց։

Վիզայի գայմագամն իմանալով այս դէպքը, կը հեռագրէ առ կուսակալն։

Թէեւ խումբ մը զօրք անմիջապէս ճանրայ հանուած են, բայց չարագործք տակաւին չեն ձերբակալուած։ Ասոնք հուսկ ուրեմն տանտիրոջ որդին սպանած լինելով խեղճ երիտասարդին հարսը խելքը կորսուսեր է։

Քաղաքապետութեան մի նոր պաշտօնական ազդը կը ծանուցանէ թէ Կեսարիոյ թղթատարը կողոպտող աւազակներէն ընդ ամենը 18 հոգի ձերբակալուեր և Տիւզճէ տարուեր են հարցաքննուելու համար։ Պոլսի կառավարիչ Իսմայիլ պէյ մի քանի օրէ ի վեր անդ գնացեր է այս գործին քննութեան ձեռնարկելու։ ——

Մէսաժբրի Մարիթիմ ընկերութեան Էրիտուն շոգենաւը Սելանիկ գնացած տեղն՝ Ցէտէ–աղաճիի կողմերը խրեր բայց եղած ջանից շնորհիւ ազատեր է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԹԱՆԵՍ ՀԱՎԱՍ

ՖՐԱՆՏԷՈ–ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Փարիզ, 17 Նոյեմբեր

Կը հաստատուի սա զրոյցը թէ Ֆրանսա եւ Չինաստան ուղղակի կը բանակցին։

ԱՆԳԼԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լոնտրա, 18 Նոյեմբեր

Երեսփոխանական ժողովը Պ. Զիլսբրսի մէկ առաջարկն ընդունեց, որ կը տրամադրէ անձնական եկամուտի (Քէքս Դաէս) վրայ դրուած տուրքն աւելցնել՝ այս տարուց ելմտացոյցին վրայ նշանակուած արտասովոր ծախքերն հոգալու համար։

ՀԱՎԱՍ ԿԸ ՄԵՆԱՄԱՐՏԻ

Փարիզ, 18 Նոյեմբեր

Մ. Դ' Օրդրէ լրագրին մէջ հրատարակեալ նախատալից յօդուածի մը պատճառաւ, Ամժանս Հավասի տնօրէն Պ. Լոռուար Լրպէ մենամարտի հրաւիրեց զՊ. Սէսի, որ այն յօդուածն ստորագրած էր։

Մենամարտն այսօր տեղի ունեցաւ։ Պ. Սէսի ձեռքէն վիրաւորեցաւ։

ՄԱՌԻՍԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

Փարիզ, 18 Նոյեմբեր

Երեսփոխանական ժողովոյ յանձնախումբն սկզբամբ ընդունեց Ֆրանսա մտնող ցորենները և ալիւրներու մաքսին յաւելումը։

ՔՈՂԵՐԱՆ Ի ՏՐԱՆՍԱ

Բարիզ, 17 Նոյեմբեր, եր.

Երէկ (Կիրակի) քուերայէն մեռնող անձանց թիւը 44ի կը հասնի։ Այսօր (երկուշաբթի) մեռնողներուն մինչեւ ցարդ ծանօթ թիւը 20ի կը հասնի։

Փարիզ, 18 Նոյեմ. եր.

Երէկ (երկուշաբթի) քուերայէն մեռնող անձանց թիւն 36ի կը հասնի։

Այսօր (երեքշաբթի) մեռնողներուն մինչեւ ցարդ ծանօթ թիւը 30ի կը հասնի։

Նոայլ մարդիկն ասա հասաւ։

ՔՈՂԵՐԱՆ Ի ՃԷՆԱՅԻՐ

Ալժէ, 17 Նոյմ. եր.

Երկու օրէ ի վեր 11 հոգի մեռան քուերայէն յՕրան։

Ալժէ, 18 Նոյեմ. եր.

Այսօր 4 հոգի մեռան քուերայէն յՕրան։

ԱԺԱՆՍՆ ՌԻԻԻԷՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոնտրա, 18 Նոյեմ.

Թայմս կը ծանուցանէ թէ Պ. Կլատսդընն եւ Լորտ Սալիսպուրի իրաւախոհ եղած են ընտրական ծրագրին վրայ։

ԼԱՒԻՐՈՄԻ ԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Ամֆէզա, 18 Նոյեմ.

Լաւրիոմի հանքաց ընկերութեան գանձապետներն սպանողներէն հինգ հոգի եւս ձերբակալեցան։

ԴՐԱՄԱԿԱՆ

ԶԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 7 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110
3 » » » (վճռելի)	109 3/8
3 » Բարիզ » (պանքայի)	22 95
» » » (վճռելի)	23 2 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹԹՈՅՑ

Օսմանեան Քոնսոլիտ

Երէկ երեկոյ գոցուեցաւ դհկ.	8 34
Պօրսային գոցուելէն վերջը »	8 35
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	8 34
Բարձրագոյն գին »	8 34 1/2
Նուազագոյն »	8 34
Կէս օրին »	8 34
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.)	70 20
Երէկ իրիկուն գոցուեցաւ	70 15
Բերայի մէջ	—
Այս առաւ. բացուեցաւ Գ. Կ.	69 30
Կէս օրին	69 32 1/2
Հէվալէտիզ	20
Բէքար գօնսոլիտէի	—
» իւնիֆիէի	—

Փոխառութիւն 1863	Ֆր.	75
» 1865	»	56
» 1869	»	49 50
» 1873	»	44
Պօն տու Թրեզոր	Անգլ. Լ.	21 625
Բուէնոսի երկաթուղի	Ֆր.	44
Օպլիկասիոն տը Բրիմիէ	»	—
Բամեսթուղթ Լաւրիսմի	»	78

ԲԱՖԻՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ ժենէրալ	Անգլ. Լ.	3 30
Քրեդի ժենէրալ (Գ. Կ.)	Օսմ. Լ.	7 40
Պանք տը Գոնս	»	5 32
Սօս. Շանժ է վալէօր	Օսմ. Լ.	3 22
Թրամուէյ	»	282 1/2

Ընկացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանգնոց	»	88
Անգլիական ոսկի	»	110 48
Բշլ. Իմբէրիալ	»	90 42
Բրիմիզ	»	51 20
Ռուսլի Թրեզորամ	»	8 88
» արծաթ	»	89 30
Ֆիորին	»	9 1
Մէջ. արծ. (տարբ.)	»	108
Վ. եղնոց	»	102 35
Հինգնոց	»	102 35
Մէճիտիէ	»	98 20
Պրնեմ	»	780
Թրեզորամ	»	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 17 Նոյեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ գոցուեցաւ	100 1/16
Օսմ. բացուեցաւ	8 1/8
» » գոցուեցաւ	8 1/8
Օսմ. փոխառութիւն 1865	11 1/8
» » 1869	9 7/8
» » 1871	67 3/4
» » 1872	20 1/2
» » 1873	8 3/4
Փոխառութիւն 1877	80
Պանք Օթօման	13 1/4
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	94 7/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	62 3/8
» առանձ. (բրիմիէժիէ)	84 3/8
Տպրա Սանիէ	60 3/4
Տօմանիէալ (փոխառ. Բօչիլա)	83 1/4
Հունգարական պարտաթուղթ 1877	102 1/2
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 512

Վիէննա, 18 Նոյեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	123 30
Օսմանեան երկաթուղի	21 50

Բարիզ, 18 Նոյեմ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 % բաց	107 82 1/2
» » 3 % բաց	78 45
Օսմանեան քոնսոլիտէ բացուեցաւ	8 22 1/2
» » գոցու. (գ. կ.)	8 22 1/2
» » 1865	58
» » 1869	50
» » 1873	44
Օսմանեան երկաթուղի	44 75
» Բէժիի բաժնեթուղթք	518 75
Պանք Օթոման	585
Գրեսի Լիոնէ	520
» Ժենովէ	1295
Բաժնեւոսն Լիոնի (գուբ. կար.)	1240
Սուէզի ջրանցք	1900
Ռուսական 5 % 1877ի	99 1/2
Իտալական Ռանթ	96 95
Եգիպտական միացեալ գոց	320
Սպանիական (արտաքին)	59
Բրիորիթէ թիւրք	381 25
5 % Հելլենական	362 50
Չէք Լոնտրայի վրայ	25 29

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Նոյեմբեր 18 ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթի, 4 1/2 %	107 87 1/2
Օսմանեան »	8 25
Եգիպտական միացեալ	320

ՍԻԲԻՐԻԱՅԻ ՀԱՅԱԳԱՒԱՆ ՀԱՅԵՐԸ

«Աչքից հեռացած, մտքից մոռացած, իրանք անվերջու »....

Երկար տարիներէ հետէ է որ՝ ուրիշ ազգութեան եւ ուրիշ դաւանութեան պատկանող մարդկանց թւում՝ մեր հայադաւան հայերից օրինական պատժի ենթարկուելով աքսորվում են և Արեւմտեան և Արեւելեան Սիբիրիա կա՛մ ժամանակաւորապէս կա՛մ մշանջենական։ Եւ այնուհետեւ՝ անագորոյն բախտի այդ թշուառ զոհերը, անջատուած լինելով իրենց ծնողներից, եղբայրներից ու քոյրերից, ազգականներից ու բարեկամներից, ընկերներից ու սիրելիներից, զրկուած լինելով իրենց ծննդեան քաղցր տեղից, իրենց մանկութեան անմոռանալի յիշատակներից, կարվում են մեզնից բոլորովին, մուսացվում են ըստ ամենայնի, և ընկնում են անյայտութեան անյատակ անդունդի մէջ։ Ի՞նչպէս են ապրում նրանք — այդ աքսորեալ գաղթականները— ոմտեսկանի կողմից։ Ինչպիսի՞ կեանք են վարում այդ ողորմելիները Սիբիրիայի՝ այն սառնամանիք աշխարհի —անսովոր կլիմայի տակ՝ առողջութեան կողմից, ի՞նչ տեսակ յարաբերութիւն է ունենում տեղական բնիկ ժողովուրդը նրանց հետ՝ մարդասիրական տեսակէտից, և վերջապէս՝ ի՞նչպէս են անցնում այդ խեղճ պանդուխտների համար օրերը այն դաժան երկրում։—Ահա հարցեր, որոնցով կարծում և ոչ ոք մինչեւ այսօր չէ հետաքրքրուել։ «Հնուացար, — մոռացար» ճիշդ նրանց այն անբախտների համար է ասուած։

Նրանցով չեն հետաքրքրուել և մեր հոգեւոր հայրերը, հայրերը՝ որոնք պաշտօնեայ են այն սուրբ եկեղեցւոյն, որի գլխաւոր նպատակներից մէկն էլ մոլորեալ ոչխարների համար հոգալն է։ Դրանք հովիւներ են բանաւոր հօտի. բայց իրենց յանձնուած բանաւոր ոչխարներից հայրներով արդէն մոլորուած են իրենց հօտից, հազարներով արդէն բացակայուած են իրենց արօտավայրերից, սակայն՝ Քրիստոսի այդ ներկայացուցիչները դեռ չեն էլ մտածում գոնէ որ և է մի ճանապարհով զուրկ չը թողնել այն խեղճերի կրօնական ծարաւով և կարօտի փափագով տոչորուող հոգիները ազգային եկեղեցւոյ քաղցր մխիթարութիւններից։ Այդ հայրերը, որ անդադար հոգում են իրենց շրջապատող դեռ կենդանի մարդկանց և արդէն մեռածների հոգիների համար, միեւնոյն այդ սուրբ հայրերը՝ մոռանում են իրենց՝ թէեւ աքսորուած— արտաքերեզմանեան աշխարհի պէս մի տեղ յղուած՝ այնու ամենայնիւ՝ դեռ կենդանի ոչխարները։ Չէ՞ որ նրանք եւս քրիստոնեայ են և քրիստոնէական կրօնի զգացմունքներով տոգորուած։

Ի՞նչ անենք, որ օրինակէս աքսորուածներ են։ Կախաղանի դատապարտուածների՞ն անդամ իրաւունք է տրվում կրօնական սփոփումից զուրկ չը մնալ։

Արեւմտեան և Արեւելեան Սիբիրիայում ճանապարհորդելիս՝ Տօբոլսկ, Տօմսկ, Կրասնոեարսկ, Իրկուտսկ, Զիտայ և Բլագովէշչենսկ քաղաքներում ծանօթանում էի և խոսում խումբ հայադաւան հայերի հետ, որոնք դիտում էին ինձ, զսնդան տեղեկութիւններ էին հարցնում, պատմում էին իրենց ամեն տեսակ վշտերը, նկարագրում էին գլխաւորապէս իրենց հոգեկան ամենամխիթար դրութիւնը, յայտնում էին, որ իրենց ամենքը—մէկ տարիից սկսած մինչեւ 15–20 և էլ աւելի տարիներ՝ չեն հաղորդուած—Քրիստոսի կենարար Արեան և Մարմնոյն չեն արժանացած։ Թէեւ ճարահատեալ՝ խորհրդի չդնելով դիմել են ուղղափառ եկեղեցւոյն և խնդրել են խոստովանեցնել ու հաղորդել իրենց, բայց տարբարաղդաբար նոյն եկեղեցւոյ հոգեւոր վարչութիւնը մերժելով հանդերձ առաջարկել է դրանց ուղղափառութիւն ընդունել, որը ի հարկէ, բացառութեամբ մի քահանայի չեն ընդունել, ուստի և այդ կրօնական մը խիթարութիւնից եւս, դեռ մի կողմ թողած եկեղեցական արարողութիւնների, այն հոգեվարքայ ծէսերի ախորժ ներդաշնակութիւնները, մնացել են զուրկ։

Բացի այդ այս օրերս էլ—լրացած ամսի 29ին—պատահութիւն ունեցայ ստանալու Իրկուտսկից մի նամակ «Վլաս Պոդոլսկան Վլասեան» ստորագրութեամբ։ Այդ պարոնը, որի հետ ծանօթանալու պատիւ չեմ ունեցել թէեւ, այնու ամենայնիւ յղում է ինձ պատմելը իւր այն խնդրի, որը 1882 թուականի մարտ ամսոյ 3ին առաջարկելով Իրկուտսկի հոգեւոր կոնսիստորիային յայտնել է, որ ինքը «ինչպէս ճշմարիտ քրիստոնեայ և հետեւող հայոց դաւանութեան, ցանկանալով հանդերձ, որ իւր բոլոր կեանքում հաւատարիմ մնայ իւր այդ կրօնին», խնդրում է թոյլատրել իրան ապաշխարհելու և Քրիստոսի Արեան և Մարմնոյն՝ գոնէ ուղղափառ եկեղեցւոյ մէջ՝ հաղորդ լինելու, բայց այդ եկեղեցւոյ վարչութիւնը՝ դոյն խնդրի հիման վերայ՝ նոյն 1882 թուականի մարտ ամսոյ 10ին կազմած իւր օրագրութիւնով՝ (որի պատճէնը եւս յղել է), զբացասում է Վլասեանցին, և առաջարկում է նախ ուղղափառութիւն ընդունել»։ Պարոնը յղելով այդ երկու պատճէնները, նամակի միջոցաւ խնդրում է օգնել իրան թէ՝ խորհրդով և թէ՝ խնդիր գրելով՝ եթէ պէտք լինի այդ մասին։

Հայոց եկեղեցւոյ Հոգեւոր Ս. Մինոլի յարգելի ուշադրութիւնը այսի կարեւոր խնդրի վերայ հրաւիրելով, վատահօրէն առաջարկում եմ, ի հարկէ, խնդրի իրականացումն օգնելու համար, երկու միջոց,— նախ՝ երկու քահանայ նշանակել մէկը Արեւմտեան Սիբիրիայի համար Տօմսկ, իսկ միւսը Արեւելեան Սիբիրայի համար Իրկուտսկ քաղաքներում։ Այդ քահանայները ո՛րքան յայտնի է ինձ այնտեղացիների, մանաւանդ հայ աքսորուածների նիւթական ապահովութիւնը, կարող են ապատից աւելի շահմունք ունենալ։ և երկրորդ՝ եթէ մեր քահանայներից՝ ի մանկութենէ հետէ վախենալով Սիբիր անունից, չը բարեհաճեն յօժարութեամբ գնալ, այն ժամանակ՝ մեզ դարձած քահանայներից մի երկուսին՝ Սեւան աքսորելու փոխանակ՝ նշանակել Սիբիրիայ։

Մ. Ա.Ռ.ՔԷԼԵԱՆՑ Ս.

Ախալքալաք, 14 հոկտ.

(Նոր–Դար)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ»Ի

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑՈՒԶՈՒՄ Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՈՒ

Նիւ–Եորք, 30 Հոկտ. 1884

Ամիսներէ հետէ Միացեալ–Նահանգաց մէկ ծայրէն միւսը կայ այնպիսի յուզում մը՝ զոր երեւակայել իսկ դժուար է անոնց, որ Նախագահի ընտրութեան առեն այս երկիրը դտնուած և այս տեսակ յուզման ականատես եղած չեն։ Այս յուզումը կ'ապացուցանայ այնչափ, որչափ կը մեծնայ նոյեմբերի չորրորդ օրն՝ որ է վերջնական ընտրութեան օրը։ Գրեթէ ամեն օր քաղաքական մեծ ժողովներ, ցոյցեր և հանդէսներ կը լլլան։ Ճառախաններ, արուեստաւորներ, ուսանողներ և նոյն իսկ գործաւորներ իրենց ժողովներն ունին, և շատ անգամ թողլով ամեն բան գործ, իւրաքանչիւրն իւր կողմը զօրացնելու միջոցներուն վրայ կը խորհի։ Ինչպէս յայտնի է, բոլոր Միացեալ–Նահանգաց ժողովուրդը բաժնուած է քաղաքական երկու մեծ կուսակցութեանց, Հանրապետական և Դեմոկրատական կուսակցութիւններ՝ որոնք եւս ունին իրենց ընտրաբաժանումները։ Կուսակցութիւնք քաղաքական, վարչական և անտեսական տարբեր և գրեթէ իրարու հակառակ սկզբունքներ ունին, և իւրաքանչիւր կուսակցութիւն՝ երկրին բարօրութիւնն ու յաջողութիւնը կը տեսնէ իւր սկզբանց յաղթանակելուն մէջ։ Սակայն ցաւալի է որ ազգային այսպիսի մեծ յուզման մը մէջ իսկ կը թուի թէ չատեր կան՝ որք անհատական շահէ աւելի բարձր չարժուիթ չունին այնչափ եռանդով գործելու։ Այլեւայլ կուսակցութիւնք իրենց յատուկ ընտրելիներն ունին, բայց գլխաւոր ընտրելիք են Մր. Պլէյն, Ամերիկայի նշանաւորագոյն քաղաքագէտներէն մին, ընտրելի Հանրապետական կուսակցութեան, եւ Մր. Ռիվլէյնտ, այժմու կուսակալ Նիւ–Եորք նահանգին, ընտրելի Դեմոկրատական կուսակցութեան։ Այս ընտրելեաց յայտարարութիւնքն եւ երկու կուսակցութեանց սկզբունքն ընդարձակապէս հրատարակուած են արդէն Աբէ–Ելէի մէջ, և հարկ չէ աւելի երկար խօսիլ անոնց ընկղմանց վրայ, որք մտէն վերաբերութիւն չունին Թուրքիոյ ժողովրդեան։ Այն օրէն որ այս ընտրելիք անուանուեցան, ամեն կողմ քաղաքական նոր խմբակներ եւ ժողովներ կազմուեցան, մեծագումար դրամներ հաւաքուեցան, եւ մեծ պատրաստութիւններ տեսնուեցան իւրաքանչիւր կուսակցութեան յաղթութիւնն ապահովցնելու համար։ Ընտրելեաց կենսագրութիւններն հրատարակուեցան եւ հազարներով վաճառուեցան. անոնց լուսանկար և մեծադիր պատկերներն ամեն քաղաքի, գիւղաքաղաքի եւ նոյն իսկ գիւղերու անկիւններն եւ հրապարակներու մէջ դրուեցան։ Հազարաւոր թերթեր իրենց էջերը լեցնել սկսան մեծաւ մասամբ ընտրելիներ պատրաստութիւններով, եւ ընտրելեաց քաղաքական, ընտանեկան եւ անհատական կենաց նկարագրութիւններով։ Խօսելու եւ գրելու ազատութիւնն՝ որ անսահման է ասա, իւր բոլոր նշանակութեամբ իւգործ կը դրուի նախագահական ընտրելեաց նկատմամբ։ Մինչ մէկ կողմն իւր ընտրելին դովելու եւ բարձրացնելու համար անոր իրական եւ երեւակայական առաքինութիւնները խոշոր գոյներով կը տեսնէ եւ պայծառ գոյներով կը նկարագրէ, միւս կողմն ալ ոչ մէկ բանի կը խնայէ հակառակ կողման ընտրելին մատնելու, պարսաւելու եւ անուանարկելու համար։ Դժբաղդաբար կիրքերն այնչափ յուզուած են որ շատ անգամ երկու կուսակցութիւնք իսկ ճշմարտութենէ կը հեռանան, եւ անկողմնակալ մարդ մը չկրնար դիւրաւ որոշել թէ ո՞ր կուսակցութեան խօսքին հաւատալու է, եւ ո՞ւր գտնելու է սադ տեղեկութիւն ընտրելեաց նկատմամբ։ Ոչ միայն լրագիրք՝ այլ և հարիւրաւոր անձինք, որք քաղաքական գործերով զբաղիլ եւ ազգին անդին պտրտելով ատենաբանութիւններ ընել իրենց բան գործ դրած են, հազարաւոր ունկնդիրներու առջեւ կ'ելլեն եւ կը խօսին, ամեն ազգի բան իրենց կողման ընտրելուն, և ամեն դէշ բան հակառակ կողման ընտրելուն վրայ։ Երկու կողմանք զսիմանու կ'ամբաստանեն, ըսելով թէ կաշառքով ընտրող կը վարձեն եւ եւ։ Արդարև այլեւայլ խմբակներ մեծագումար դրամ կը հաւաքեն և ծախք կ'ընեն, և յայտնի հանդանակութիւններ կ'ելլան ընտրական ծախուց համար։ Մերթ կուսակցական ցոյցեր կ'ելլան, և այսպիսի ցոյցերու ատեն շատ անհատներ իրենց քսակէն մինչեւ 5000–10,000 թալէր ծախք կ'ընեն հրախաղութեանց և ուրիշ բաներու։ Քանի մը շաբաթ առաջ Նիւ–Եորքի մէջ Ռամվարականք մեծ ցոյց մ'ընին, որուն մասնակից էին իբր 25,000 անձինք այլեւայլ համազգեաներով, նուագարաններով, քահանաներով, լաստերներով և այլ տեսակ տեսակ նշաններով։ Նոյն երեկոյ ամբողջ երեք ժամ հրախաղութիւններ եղան եւ այն երեկոյ տեսնուեցաւ թէ հրախաղութեան արուեստն ո՛րչափ յառաջացած էր։ Նախագահութեան ընտրելիք եւս Նահանգաց այլեւայլ կողմերը կը պտրտին, իրենց ներկայութեամբ քաջալերելու իրենց կուսակիցները եւ աւելի կուսակից շահելու համար։ Պ. Պլէյն ուրիշ շատ քաղաքներ այցելելէ եւ ետքը, քանի մ'օր առաջ եկաւ Նիւ–Եորք եւ փառաւոր ընդունելութիւն գտաւ իւր կուսակիցներէն։ Թէ ո՛րպիսի ընդունելութիւն ըրին Հանրապետական միլիոնատէրը Մր. Պլէյնի, Ռամ. կավարական թերթէ մը թարգմանելով կը զրեմ ձեզ.

Ռամվարական թերթին ճակատը զարդուած է պատկեր մը ուր կը տեսնուին Ամերիկայի միլիոնատէրերէն և քաղաքագէտներէն քսան երեւելի անձինք բազմախորտիկ սեղանի մը շուրջը բազմեալ, և պատկերին վարի կողմը կը տեսնուին ագռաւ այր մը, կին մը և անոնց մէկ զաւակն որ անօթի են և հաց կը մուրան։ Պատկերին վրայ խոշոր գրերով գրուած է ՊԱՂՏԱՍԱՐԻ ԱՐԲԱՅԱԿԱՆ ԽՆՋՈՑԻՆ, ՊԼԷՅՆ ԵՒ ԴՐԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ, և սեղանատան պատերուն վրայ գրուած են ՄԱՆԷ, ԹԷՔԷԼ ու ՓԱՐԷՍ։ Այն յօդուածն յորում կը նկարագրուի ի պատիւ Պլէյնի արուած խնջոյքը, ունի սա վերնագիրը. «Մամոնայի մեծ արանքը, Պլէյն կ'ուտէ կը խմէ դրամի հոգոր թագաւորներուն հետ . . . Լուսաբլրա կը զուարճանայ մինչ Երկիրը կը ցաւի եւ եւ։»

Երէկ երեկոյի Տէյլիսիդդ (այն տեղն ուր խնջոյք արուեցաւ ի պատիւ Մր. Պլէյնի) լեցուած էր միլիոնատէրերով։ Մեծածախս խնջոյք մը պատրաստուած էր։ Խնջոյքի ծախքը հոգացած էին 200 նշանաւոր անձինք որ այս կամ այն կերպով մեծ շահ ունին սչխատելու որ կառավարութեան արգի ձեւին մէջ փոփոխութիւն տեղի չունենայ։ Խնջոյքին նստատեղ էր կրկնակի։ առերես Մր. Պլէյն պատուելու համար, բայց արդեամբ հաւաքելու համար 500,000 թալէր կաշառքի դրամ որով կ'ուզեն յաղթել ժողովրդական կամաց։ Հանրապետական կուսակցութեան գլուխները յուսահատական ձգանց մէջ են։ Գրեթէ կը խոստովանին որ կարող չեն յաղթութիւն ստանալ ուղիղ միջոցներով։ Անոնց գրօշակիրը կը հայտնայ թէ «ուրէ՞ իւր տկարութիւնն, և գիտէ թէ կան տեղեր ուր «ոսկւոյ առուակ» մը աւելի ազդու կրնայ ըլլալ քան ամենէն պերճախօս առենաբանները։

Ամէն կողմանէ կ'սպասուէր իւր հետ բերել չէ՞ մը գործադրելու համար յօգուտ այն երեկոյեան հիւրին (Մր. Պլէյնի)։ Հեղեղի նման անձրեւ կը տեղար, այսու ամենայնիւ Նիւ–Եորքի մեծավաճառներէն (մեծաքլեանէ) 200 անձինք ներկայ էին պատուելու զՀէյնս և Պլէյն։ Խնջոյքի սրահը աքանչելի կերպով զարդարուած էր։ . . . Հոն կար ամեն բան զոր արուեստը կրնայ պատրաստել, և անհուն դրամը կրնայ ձեռք բերել։ Սակայն տարակուսելի է թէ հիւրն և ասպնջականները դոհ էին։ Սրահին մէկ կողմն նուագածուսոյ ընտիր խումբ մը կը նուագէր ազգային եղանակներ։ Պատերը դրօշակներով զարդարուած էին։ Պարկեշտ և ուղիղ Վաշինկդոնի մէկ մեծ պատկերը կախուած էր յետեւդս այն թիկնաթոռին որ վերապահուած էր Մր. Պլէյնի։ Խնջոյքին կը նախագահէր Ուիլեամ Մ. Էվարդս, Միացեալ Նահանգաց ներքին գործոց նախորդ պաշտօնեայն։

Մր. Էվարդս առենաբանութեամբ մը ողջունեց զՄր. Պլէյն, և ազդու կերպով բացատրեց թէ ինչ են Հանրապետական կուսակցութեան սկզբունքներն որոց պաշտպան ներկայացուց ընտրելին։ «Հանրապետական կուսակցութեան քաջութիւնն, ուղղութիւնն և իմաստութիւնն, ըսաւ, հասուցած են զմեզ այն անաւելի զօրութեան և վարկին զոր ունինք այժմ ի պարծանս մեր ժողովրդեան և ի զարմանս աշխարհի։ Մենք այս սկզբունքներէն պիտի չշեղինք մինչեւ որ, առաջին օրինակն ըլլալով պարքով ապրող ազգերուն մէջ, քաղաքային պատերազմին ամեն բեռը վերնայ արուեստից և մեծ գործերու ձեռնարկութեանց վրայէն։ «Պարաքէ ապատ, վտանգէ ապատ» առածն որ մեզ հասած է այս ազգին հինանդիրներէն, այս Հանրապետութեան մէջ արդեամբ պիտի ցուցնենք, և այսպէս ամէն կողէ ապատ ըլլալով պիտի մրցինք աշխարհի վաճառականութեան համար»։

Մր. Պլէյն երկար առենաբանութեամբ մը պատասխանեց Մր. Էվարդսի։ «Այս մեծ ընդունելութիւնը կ'ընէք ինձ ոչ իբրեւ անհատի մը, այլ իբրեւ ներկայացուցչի այն սկզբանց զորս դուք և ես ի միասին կ'ընդունինք նկատմամբ այն մեծ շահերուն որոնք, ինչպէս կը հաւատանք, են հիմունք ազգին բարգաւաճման։ Վայելուչ է որ այս երկրին առեւտրական մայրաքաղաքը գլուխ կանգնի, վայելուչ է որ այս երկրին ելեւմտական կեդրոնն առաջնորդէ, վայելուչ է որ այս մեծ քաղաքն յայտնէ բոլոր երկրին իւր տեսութիւններն և իւր դատաստան այն կարեւոր խնդրոց վրայ զորս պիտի որոշէ Ամերիկայի ժողովրդը յառաջիկայ երեքշաբթի օրն . . . կը հաստատիսի յիշեցուցնել ձեզ, ո՛ Նիւ Եորքցիք, թէ այս մեծահարստաս քաղաքին հարստութեան հարիւրին եօթանասունն ստացուած է յսրմէ հետէ Աբրահամ Լինկըլն նստաւ նախագահութեան աթոռը, 1861 մարտի 4ին։ Հոս այս հաշիւը չէի յիշեր, եթէ սա չուենենար իւր մէջ փառս և բարոյական։ Նիւ Եորքի մասին ընդհանուր գաղափարը սա է թէ Նիւ Եորք է միայն առեւտրական մեծ քաղաք, այնչափ մեծ որ այս քաղաքին արտաքուստիկը և ներքուստիկը են մեծ ման Միացեալ Նահանգաց արտաքուստից և ներքուստեանց։ Ամենքս գիտենք զայս։ Բայց յաճախ մոռացեալ ենք մտնելու թէ Նիւ Եորք աշխարհի մէջ մեծագոյն քաղաքն է ձեռագործաց կողմանէ . . և ամեն տարի Միացեալ Նահանգաց մէջ պատրաստուած 3,000,000,000 թալէրի ձեռագործին մէկ հինգերորդ մասը, այսինքն 1,200,000,000 թալէրի ձեռագործ, Նիւ Եորք նահանգը կ'արտադրէ, և Նիւ Եորք քաղաքը միայն կ'արտադրէ 500,000,000 թալէրի ձեռագործ։ Ասոնք յառաջ եկած է այն մեծ համակրութիւնն, շահուց այն մեծ ներդաշնակութիւնն որ մէջտեղն վերցուցած է վէճերն որ երբեմն կային ձեռագործական և առեւտրական շահերու մէջ, և որվեցուցած է մեզ թէ երկրին մէջ ճշմարիտ բարգաւաճում չըլլար եթէ երկրագործական, ձեռագործական և առեւտրական երեք մեծ շահեր միասնաբար չը գործեն մի եւ նոյն նպատակին և հասարակ բարւոյն համար։ Սովորաբար կը կարծուի թէ կառավարութեան փոփոխութիւնը մեծ նշանակութիւն չունի. թէ որոշեալ օր մը մեր քուէներով կը հաւաքուինք տեղ մը, և կը համբենք քուէները երբ արեւը մարը կը մտնէ, և կուսակցութիւն մը կ'երթայ, ուրիշ կուսակցութիւն մը կուգայ։ Սակայն, Տեարք, հարկ է յիշել թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն այսօր կ'ընթանայ աշխարհավարութեան որոշեալ հիման մը վրայ։ Ունինք ելեւմտական մեծ դրութիւն մը. ունինք չրջաբերութեան մէջ դանուած դրամի մեծ դրութիւն մը, ունինք ազգային կարեւոր վարկ մը, ունինք հարկ հաւաքելու որոշեալ դրութիւն մը։ Երբ մեր կուսակցութիւնը քաշուի իշխանութենէ, և մեր հակառակ կուսակցութիւնն անցնի կառավարութեան դուռները, այս դրութիւնները պիտի փոխուին թէ ոչ։ (Այո՛, այո, կ'ըսեն ձայներ)։ Եթէ իրաք ասոնք պիտի փոխուին, ամէնքս պատրաստ ըլլալու ենք ուրեմն մեծ աղէտի մը։ Եթէ այս դրութիւնները պիտի փոխուին, ձեր բոլոր հաշիւները պիտի չփոթին, և դուք ձեր բոլոր հաշուետուերը աչքէ անցուելու էք և պատրաստուելու էք նոր, և կրնամ ըսել, վտանգաւոր փոփոխութեան մը. իսկ եթէ այս դրութիւնները պիտի չփոխուին, հարկաւ ըլլալու կերպով պիտի պահպանուին ի ձեռն այն մեծ կուսակցութեան որ հեղինէն է այս դրութենից և մինչեւ ցարդ պահպանած է զանոնք կորովով և յաջողութեամբ։» Մր. Պլէյն բացատրելէ եւ թէ ապատ վաճառականութեան դրութեամբ երկիրն, և մանաւանդ Նիւ Եորք ո՛րչափ մեծ վնաս պիտի կրէ, կը յարէ. «Հանրապետութեանց ապահովութեան պայմանը սա է թէ Հանրապետութիւնք յարմար չեն պատերազմի, ըսել կ'ուզեմ, յարձակողական պատերազմի. և այս Հանրապետութեան ապահովութիւնն է յայտ որ պաշտպանողական պատերազմի համար կրնանք ասպարէզ կարգալ համայն աշխարհի։ Այս ազգն այսօր խորին խաղաղութեան մէջէ աշխարհի հետ։ Բայց իմ գաղափարս, այս ազգն ունի իւր ասջեւ մեծ պարտականութիւն մը որ ոչ միայն մշտատեւ պիտի ընէ այս խորին խաղաղութիւնն, այլ պիտի ցուցնէ այնպիսի օրինակ մը որ բացարձակապէս ջնջէ պատերազմն երկրիս այս մասին վրայէն, և մեծ օրինակաւ և բարձր բարոյական ազդեցութեամբ մը վերջապէս ջնջէ պատերազմն ուրիշ երկիրներէ։

«Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի ճօճանուտան անկախ տերութիւններէն իւրաքանչիւրը ո՛չ միայն յօժար այլ և պատրաստ է, ո՛չ միայն պատրաստ այլ և փափաքող է հանդիսաւոր միաբանութեան մը գալու և կազմելու համար վեհաժողով մը որ յանուն խաղաղութեան գումարի, որպէս զի, եթէ դժբաղդաբար դժտութիւններ ծագին մարդոց և ազգաց մէջ, այն զըժտութիւնները լուծուին իրաւախոհութեան քրիստոնէական հիմանց վրայ։ Եւ ինչպէս ասկէ յառաջ յաճախ ըսած եմ, ուրախ եմ կրկնելու, քաղաքակրթութեան և օրէնքեան այս մեծ կեդրոնին մէջ, թէ իմ գաղափարս ոչ մի ազգային տեսարան, ոչ մի միջազգային տեսարան, ոչ մի աշխարհային տեսարան կրնայ ըլլալ աւելի վեհ քան զայն տեսարանն որ Արեւմտեան աշխարհի Հանրապետականք համաձայնին թէ ո՛չ Հիւսիսային և ո՛չ Հարաւային Ամերիկայի հողն այսուհետեւ արատաւորի եղբարց արեամբ»։

Մր. Պլէյն հաշիւներով ցուցուց թէ Հանրապետական կառավարութեան օրով Ամերիկայի հարստութիւնը, զօրութիւնը եւ պատիւն ո՛րչափ աւելցած են։ Մինչ 23 տարի առաջ Նիւ – Եորք նահանգին հարստութիւնն 1,800,000,000 թալէր կը հաշուուէր, այժմ 6,500,000,000 թալէրի բարձրացած է, եւ յարեց. «Ելմտական յառաջադիմութեան պատմութեան մէջ, աշխարհի պատմութեան մէջ երբէք տեսնուած չէ այսպիսի յառաջադիմութիւն», եւ յոյս ու վստահութիւն յայտնեց թէ Նիւ – Եորքի նահանգը պիտի չհաւանի որ վոփոխի կառավարութիւն մը որ այսչափ նպաստած է երկրին ընդհանուր և մանաւանդ Նիւ – Եորք նահանգին բարգաւաճման։

Ռամվարականք և Հանրապետականք մեծ գումարներ գրաւի կը դնեն թէ իրենց կուսակցութեան մարդիկը պիտի ընտրուին։ Երբեմն քաղաքական վիճաբանութիւնն այնչափ կը սաստկանայ, որ դաշոյնով կամ ատրճանակով կը վերջանայ։

* * *

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Թան լրագրոյ մէջ կը կարդանք.

«Մի միայն Ֆրանսայի մէջ չէ որ գիշերօթիկ վարժարանաց և անոնց ծանր անպատեհութեանց խնդիրը կ'զբաղեցնէ մտքերը։ Նշանաւոր գրող մը, Պ. Օսդար Պրոունինկ, այս առթիւ անդրիական Բէլ Մէլ Կազէթ լրագրին մէջ խորհրդածութիւններ հրատարակած է, որք մանաւանդ մասնաւոր կարեւորութիւն մ'ունին՝ նկատելով որ Պ. Օսդար քանի մը տարի ուսուցչի և վարժապետ եղած է Էդոնի գիշերօթիկ վարժարանին մէջ։

«Ցայսմիկ է թէ Էդոն Անգլիոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 3 — 15 ՆՈՅԵՄԲԵՐ

ՅՈՐԵՆ.— Հրապարակը թէև հանդարտ, բայց գները կարի հաստատ են պատրաստ ապրանաց նուազութեան պատճառաւ։ Հասաւ 20,000 գրիւ կակուղ ցորեն, 2,000 գրիւ կարծր ցորեն և 3,000 գրիւ Կիրգա։ Վաճառեցաւ 2,000 գրիւ կարծր ցորեն, 3,000 գրիւ Կիրգա և 25,000 գրիւ կակուղ։ Պատրաստ 18,000 գրիւ կակուղ ցորեն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ.— Շաբթուս ամենեւին գործ չէ եղած. հրապարակին վրայ նոր հունձքին համար $12\frac{3}{4}$ և հին ապրանաց $13\frac{3}{4}$ ղ գրիւը գնողներ կան։

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար 18,000 գրիւ Բուժէլիի ապրանք վաճառեցան ի գին $11\frac{1}{2}$ ղրշ գրիւը։ Այս գներով յամախորդք չեն պակիր։

ՋԱՎԱՏԱՐ.— Շաբթուս վաճառեցաւ երկու մաս 76,000 օխա՝ լաւ ապրանք ի գին 25 փր օխան։ Պատրաստ ապրանք այս գներով գնողներ կը դտնան։

ԼՈՒԻԲԻԱ.— Տեղական սպառման համար իբր 1,000 պարկ Բուժէլիի և Դանուբի ապրանք վաճառեցան 110-140 և մաս մ՚ալ Բուժէլիի ապրանք դրանսիտով ի գին 102 ղ 100 օխան։ Տեղական սպառման համար գնողներ կան։

ԲԱԿԼԱ.— Շաբթուս գործ չէ եղած այս տեսակին վրայ։ Գները թոյլ են ի գին 25 – 26 փարա օխան։

ՍԻՍԵՌՆ.— Այս շաբթու վաճառեցաւ 250 պարկ Զանդալէ և Սօմա ի գին 65 փր օխան։ Տեղական սպառման համար պահանջը լաւ է հաստատ գներով։

ՓԹԱՆԱՏՈՒՆՏ.— Այս շաբթու իբր 30,000 օխա վաճառեցաւ ի գին 55 փրդ օխան։ Այս գներով պահանջը լաւ է։

ՍՈՒՍԱՄ.— Այս շաբթու իբր 30,000 օխա Մէրսինի ապրանք վաճառեցան դրանսիտով ի գին 100 փրդ օխան։ իսկ տեղական սպառման համար 1,000 պարկ վաճառեցան ի գին 105-108 փրդ օխան։ Թէև պահանջը լաւ, բայց գները տկար են։

ՓԱՆԱՐԵԱ ԵՂԻՒ.— Այս շաբթու վաճառեցաւ 90,000 օխայ լաւ մաքուր ապրանք ի գին 55 փրդ օխան։ Պահանջը լաւ է տկար գներով։

ՓԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ.— Հրապարակին վրայ բաւական գնողներ կան, ի գին 70 փարա օխան բայց ապրանքը կը պակսին։

ԱՅԻՈՅՆԻ ՀՈՒՆՏ.— Իբր 30,000 օխայ նոր ապրանք վաճառեցան դրանսիտով ի գին 59 փարայ օխան։

ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՆՏ.— Գործ չէ եղած այս տեսակին վրայ։

ԱԼԻՒՐ

Հրապարակը խիստ բանուկ է, բազմաթիւ գնողներ կան հաստատ գներով։ Վաճառեցաւ այս շաբթու 26,000 պարկ։ Պատրաստ կայ 20,000 պարկ, որոց 11,000 պարկը Օռէսա, 3,000ը Պրայլա, 6,000ը տեղական։

ԴԱՂԹԱԲԵՐՔ

ՇԱՒԱՐ.— Հասաւ 2120 պարկ։ Վաճառեցաւ 1120 պարկ։ Պատրաստ 2500 պարկ։ Հրապարակը կարի հանդարտ էր այս շաբթու. գնող չկայ գնող թուլութեան պատճառաւ։

ԽԱՀՈՒԷ.— Հասաւ 800 պարկ։ Վաճառեցաւ 800 պարկ։ Պատրաստ 4,500 պարկ։ Հրապարակը իւր գործունէութեան մէջ կը շարունակէ կարի հաստատ գներով։

ԲՐԻՆՋ.— Հասաւ 1400 պարկ Անգլիական, 2400 պարկ Իտալական։ Վաճառեցաւ 900 պարկ Անգլիական և 2500 պարկ Իտալական, որոց 1200 պարկը կառավարութեան։ Պատրաստ 5000 պարկ Անգլիական և 200 պարկ Իտալական։ Հրապարակը բաւական բանուկ էր այս շաբթու, հաստատ գներով բոլոր տեսակաց համար։

ՍՊԻՏ.— Հասաւ 1500 մնտուկ։ Վաճառեցաւ 2500 մնտուկ։ Պատրաստ 3000 մնտուկ։ Շաբթուս բաւական գործեր եղան թոյլ գներով։

ՓԱՐԻԻՂ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 3,000 մնտուկ Ռուսական, և 2,000 Ամերիկեան։ Պատրաստ 26,000 մնտուկ Ամերիկայի և 9,000 մնտուկ ու 500 վարիկ Ռուսական։ Շաբթուս տեղական սպառման համար բաւական գործեր եղան հաստատ գներով։

ԱՊՈԼԿԻ.— Հասաւ 2500 մնտուկ։ Վաճառեցաւ 1700 մնտուկ։ Պատրաստ 12,000 մնտուկ։ Հրապարակը հաստատ է հաստատ գներով։

ՊՂՊԵՂ.— Գները հաստատ են լաւ պահանջով։

ՈՂԻ

ԱԼԵՊՈ.—Շաբթուս հրապարակը հանդարտ էր. գները թոյլ են։ Հասաւ 140 տակառ։ Վաճառեցաւ 90 տակառ։ Պատրաստ 220 տակառ։

ՌՈՍ.—Պահանջը տկար էր այս շաբթու, գները լքեալ դաւառներն ապրանք դրկուեցան։ Հասաւ 200 տակառակ։ Վաճառեցաւ 120 տակառակ։ Պատրաստ 450 տակառակ։

ՄԵՏԱՂ

ԵՐԿԱԹ.—Թէ հոս և թէ եւրոպական հրապարակաց վրայ որևիցէ փոփոխութիւն չկայ։ Շաբթուս վերջին օրերուն լաւ օդերէն քաջալերեալ յամախորդք բաւական դնեցին հաստատ գներով։ Այս շաբթու հասաւ 200 թօնս երկաթ և վաճառեցաւ 150 թօնս։

ԱՆԱԳ.— Հասաւ 40 տակառակ։ Վաճառեցաւ 40 տակառակ։ Պատրաստ 100 տակառակ։ Հրապարակն անփոփոխ բայց հաստատ է։

ՋԷԼԻԿ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 100 մնտուկ։ Պատրաստ 1,500 մնտուկ։ Հրապարակը անշարժ է անփոփոխ գներով։

ՓԱՐՏԻՑԱ.— Հասաւ 3,000 տակառակ։ Վաճառեցաւ 3,000 տակառակ։ Պատրաստ 22,000 տակառակ։ Հրապարակը խիստ բանուկ էր այս շաբթու հաստատ գներով։

ԹԷՆԵՔԷ.— Հասաւ ոչինչ։ Վաճառեցաւ 100 մնտուկ։ Պատրաստ 400։ Պահանջը հանդարտ է բայց գները հաստատ։

ՁԻՆԿՕ.— Հասաւ 200 տակառակ։ Վաճառեցաւ 100 տակառակ։ Պատրաստ 1700 տակառակ։ Հրապարակը հաստատ է, գնորդներ կան։

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

ՄԱՀՈՒՏԻ.— Այս շաբթու գործերը կարի սահմանափակ եղան և միմիայն շաբթուս վերջին օրերը քիչ մը բան վաճառեցան տկար գներով։

ԼՈՆԴՈՆ ԳԼՈԹ. —Շաբթուս 100 ծրարի չափ վաճառեցան լաւ ապրանք ի գին 5 $\frac{1}{8}$ լիսրան։

ԵՆԼԻԳԵՆ ՊԷՋԻ.— Այս շաբթու առաջին ձեռքէ 2 հակի չափ լաւ ապրանք վաճառեցան ի գին $4\frac{3}{8}$ լիսրան։

ԽԱՄ ԱՄԹԱՐ.— Այս շաբթու քիչ մը ապրանք վաճառեցան ի գին 32-41 ղ ծրարը. պահանջը տկար է։

ԹԷՆՋԻՖ.— Գործոց նուազութեան պատճառաւ վաճառողք չեն ընդդիմանար որով եւ գները միօրինակ անկման մէջ են։

ՊԱՍՄԱ.— Շաբթուս գործառնութիւնք աննշան էին. միմիայն վերջին երկու օրերը քիչ մը գործ եղաւ բայց անկարեւոր։

ՄԱՆԱՄ.— Սովորական աննշան գործերէն զատ ոչինչ կայ կարեւոր։ Հրապարակը հանդարտ է տկար գներով։

ՀԱՆՐԱՄԱՏԱԽ

Շաբթուս բաւական վաճառում եղան անցող չոդեանուց։ Հրապարակը հաստատ է։ Հասաւ 4,000 թօնս Ֆարտիֆ և 2,300 թօնս Նիւդասըլ։ Վաճառեցաւ 5,500 թօնս։ Պատրաստ 18,000 թօնս։

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՖ.— Այս շաբթու վաճառեցաւ 43 հակ Սիվրի-Հիսար ի գին $21\frac{1}{4}$ և 37 հակ ըստորին ի գին 7-11 ղ օխան։ Պատրաստ 6,000 հակ։ Հրապարակը կարի հանդարտ է եւ վաճառողք կը սերժեն դնորդաց գիներն։ Լոնդրա վաճառեցան 62 հակ Ֆէյր 20 բէնս և կ՚առաջարկուի 400 երկրորդ 18 բէնս լիսրան։

ԲՈՒՐԴ.— Շաբթուս որևիցէ գործ տեղի չէ ունեցած։ Հրապարակը կարի հանդարտ է թոյլ գներով։

ՄԵՏԱՔԷՍ.— Վաճառեցաւ 8 հակ Նուսխի որոց 4ը ի գին 39 և 4ը $41\frac{1}{2}$ Ֆրնք. 5 հակ մեսաքս Ֆութայիս 108-115 ղ և 2 հակ Գասպա Ֆութայիսի ի գին 75 ղ մէջիտ օխան։ Պատրաստ 300 հակ։ Հրապարակը կարի հանդարտ էր այս շաբթու առանց գնորդաց, որով եւ գները տկար են։

ԲԱՄՊ Կ.— Շաբթուս հասած 60 հակ Ամանա նոր հունձք վաճառեցան ի գին $5\frac{5}{8}$ – $6\frac{1}{8}$ ղ օխան. հրապարակը հանդարտ է և թոյլ։

ՓԷՆՏԻՐ.— Շաբթուս նշանաւոր գործառնութիւն մը չէ եղած։ Հրապարակը հանդարտութեան մէջ կը շարունակէ։

ԿԱՊԵՐՏ.— Շաբթուս մեծաքանակ որևիցէ վաճառում տեղի չունեցաւ։ Բացի 250 կոտրի չափ մանրամասնօրէն վաճառուած նշանակելի գործ չկայ։ Պատրաստ 5000 կոտր։ Հրապարակը հանդարտ է. գնողներ կը պակսին որով և գները տկար են։

ԱՅԻՈՆ.— Այս շաբթու վաճառեցան 35 մնտուկ որոց 8ը Մալաթիա, երկրորդ 225, 20ը Զիլլէ և Թօքաթ և Անիքէօյ 210-225 և 1 մնտուկ Ֆութահեա 175 և 4 մնտուկ Պէյ պազար, ի գին 170-180 ղ օխան։ Պատրաստ 235 կողով, նոր հունձք։ Հրապարակը գործոն է, սորուն գներով միշտ գնողներ կան։

ՓԻԹԻԵ.— Այս շաբթու վաճառեցաւ 3,000 օխայ, որոց 1,500 օխայ բանուած առաջին ճերմակ 25, 4000 օխայ բնական ճերմակ Նիխէլի $18\frac{1}{2}$–16, 1000 օխայ բանուած դեղին $16\frac{1}{2}$ և 1500 օխայ երկրորդական դեղին ի գին 14 ղ օխան։ Պատրաստ 20000 օխայ։ Հրապարակը բանուկ է և պատրաստ գնողներ կան հաստատ գներով։

ՄԱՀՄՈՒԶԻԷ.— Այս շաբթու որ և է վաճառում տեղի չէ ունեցած, պատրաստ 500 օխայ։

ՍԱԼԷԲ.—Այս շաբթու 1,700 օխայ վաճառեցաւ որոց 1200 օխայ Թէօքրիւ ի գին 14-15 և 500 օխայ Էքսդրա ի գին 21 ղ օխան։ Պատրաստ 2000 օխայ։

ՄԵՂՐԱՄՈՍ.— Այս շաբթու վաճառում տեղի չունեցաւ։ Պատրաստ 2,000 օխայ։ Հրապարակը հանդարտ է։

ԿԱՂԻՆ.— Այս շաբթու վաճառեցաւ 400 պարկ դրսի համար ի գին 80 ղ կենդինարը Ֆրանգօ Ֆիրատուն։ Պահանջը խիստ լաւ է սրով եւ գները բարձրանալու հակամէտ։

ՁԷՏԻՐԻ.— Այս շաբթու վաճառեցան 108 պարկ որոց 50 պարկը Զորում ի գին $5\frac{3}{4}$. 34 Ալլը–գիլէ $6\frac{1}{2}$. 14 պարկ Նէվ–շէհիր $8\frac{1}{4}$ և 10 պարկ Գայսարը ի գին $8\frac{3}{4}$ ղ օխան։ Պատրաստ 1,600 պարկ։ Հրապարակը տկար վիճակի մէջ է, գները միօրինակ անկման մէջ, լաւ Գայսարը կը փնտռուին ի գին 9 ղ օխան։

ՄԱՂՐԻ.— Այս շաբթու ամենեւին վաճառում տեղի չունեցաւ. բայց հրապարակը հաստատ է։ Պատրաստ միայն 46 պարկ սև։ Գնողներ կան։

ՄՈՊԹ.—Այս ապրանաց վրայ գործառնութիւնք կարի սահմանափակ են. միմիայն 300 կոտր Օռէսայի կողով թաց մարթ վաճառեցաւ ի գին 6 $\frac{1}{8}$ ղ օխան։

ԵՂՋԻՒՐ.—Շաբթուս որևիցէ գործառնութիւն տեղի չէ ունեցած. գները տկար են $3\frac{1}{4}$–$3\frac{3}{4}$ի միջև։

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսիոյ	Լիսրայ	57—60	Ղրշ 19 —20 $\frac{1}{2}$	Ֆիլէն
» կարծր	»	57—59	» 17—18 $\frac{1}{2}$	»
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—58	» 18 $\frac{1}{2}$—19	»
» » Պուլգարիոյ	»	56—58	» 17—18 $\frac{1}{2}$	»
» » Բուժէլի	»	57—59	» 17—19 $\frac{1}{4}$	»
Եգիպտացորեն, Կալաց, Խամպիլ և Օռէսա	»		» 15 $\frac{1}{4}$—15 $\frac{3}{4}$	»
» » Օրոս և Տաճկական	»		» 12 $\frac{3}{4}$—15	»
Գարի կակուղ	»		» 11 $\frac{1}{2}$—	»
» հաստ	»		» 11 $\frac{1}{4}$—	»
Զաւտար	»		» 15 $\frac{3}{4}$—14	»
Ֆիթանհունտա (քէֆէն թօհումի)	»		» 26 $\frac{1}{2}$—	»
Դանար եէմի	Փղ	52 — 53	Օխայ	
Նօխատ Պալիքէսէր	»	45 — 65	»	
» Ամֆնք	»	45 — 65	»	
Ֆէնոթիրի հունտ	»	70 —	»	
Պամկա	»	25 —26	»	
Սուսամ Մուտանիա Պալքէսէր	»	98 —104	»	
» Մէրսին	»	100 —108	»	
Անֆիոնի հունտ	»	59 —	»	
Լուբիա Օրոս	»	110 —120	»	
» Դանուբ և Բուժէլի	»	115 —140	»	
Օռէսա Ա. Ապիւբ	Ղրշ	110 —115	Պարկը	
» Բ. »	»	95 —105	»	
» Գ. »	»	80 — 82	»	
Ագլանա	»	78 —	»	
Պրայլա տեղական հետ խառնուած	»	68 — 70	»	
Պրայլա	»	68 — 70	»	
Վառնա	»	—	»	
Շըմլէնտրիէր	»	68 —	»	
Խահուէ	Ղշ	7·00–7·30–7·60–8·000	Օխայ· 100	տակին
Լեղակ պէնկալ	»	80— 95	» »	»
» Փուրբայ	»	55— 75	» »	»
Որդան կարմիր սեւ	»	15—	» »	»
» կարմիր թուխ	»	14—	» »	»
Պղպեղ	»	10 $\frac{1}{2}$—11—11 $\frac{1}{2}$	» »	»
Կինանան (դարչին)	»	5 $\frac{1}{2}$–6 $\frac{1}{4}$	» »	»
Գարֆիմիլ	»	8—9	» »	»
Թէյ սեւ սորին	»	12— 16	» »	»
Թէյ առաջին և լաւ	»	27— 28	» »	»
Շաքար Հոլանտայ	»	145—150	կենդինարը 105	»
» Դրիէսթէ Ա. (պարկի մէջ)	»	135	» »	»
» » Բ. (»)	»	128	» »	»
» » Գ. (»)	»	118—	» »	»
Մծուռք	»	34—35	» 100	»
Խունկ (Գիւնկիլիք)	»	210—250	» »	»
Բրիճ Խասլիոյ Ա. Ռիզօն	Ֆրանգ	46 $\frac{1}{2}$—	Պարկը	»
» » Բ. »	»	45	» »	»
» » Ա. սովորական	»	42	» »	»
» » Բ. »	»	39	» »	»
» » Գ. »	»	—	» »	»
» Հնդկական	Ղրշ	118—124—126—128	» »	»
Գօլա Գաղղիական	»	5 $\frac{3}{4}$	Օխայ	»
» Անգղիական	»	155	Սնտուկը	»
Մոմ	Ղրշ	7 $\frac{1}{2}$—	Ֆիլօ	»
,, Գաղղիական	»	89—95	»	»
Կաղ Ամերիկայի սնտուկ	»	28 $\frac{1}{2}$—35–35	»	»
» Ռուսիոյ	»	26 $\frac{1}{2}$—30—32	» »	»
» » (վարիլի մէջ)	Փարայ	45—	Օխայ	»
Ոզի Ռուսիոյ Օլատոֆքա 16 ատտիման	Օխայ	25 —	1	Ռսկւոյ
» » Ատինաքի	»	27 —		»
» » Խարքով	»	28 $\frac{1}{2}$ —		»
» Վար տեսակ Սէյանիկ և այլն	»	33 — 36		»
Ռօսի Թրիէսթէ	Կալլօն	20—		»
» Անդղլոյ		9 $\frac{1}{4}$— 9 $\frac{1}{2}$		»
Անդղլական երկաթ (չուպուզ)		42		կենդինարը
» Երկաթ (տէմէտ)		42		»
Շուէտի » (չուպուզ)		75 —77		»
» » (տէմէտ)		77		»
Տախտակ » (Սամ) թիւ 1— 4		62 —		»
» » » » 5—10		63 —		»
» » » » 11—14		77 —		»
Կաղամբ		87		»
Զէյնիպէր սովորական		55		»
» Մեծ դիրք		65 —67		»
Անեղ (դալայ)		560—570		»
Կապար (սուլմա)		110		»
» Տախտակ		113—		»
» Խողովակ		110—		»
Զէլիք	Ղրշ	128—132		Սնտուկը
Գարֆիլիա	45 քիլոնոց	58— 60		Վարիլը
Թէնեքէ		185—		2 Սնտուկը
Պղինձ		11 $\frac{3}{4}$–12		Օխայ
Ճինկօ		Ֆրանգ 69—70		100 Օխայ
Հանդուցեալ Նիւդասըլ (ի վաճառատուն)		20 Շ. 6 Բ. 21 Շ. 6 Բ.		Թօնսն
» » (ծովու վրայ)		17 » 6 » 18	» 6 »	»
» Գարտիֆ (ի վաճառատուն)		22 » 6 » 22	» 6 »	»
» » (ծովու վրայ)		20 » 0 » 20	» 6 »	»
» Հարթըբուլ		16 » 6 » 17	» »	»
Լիվերբուլ (անուանական)		16 » 0 » 16	» 6 »	»
Մահուտի	Ղրշ	5 $\frac{7}{8}$—6 $\frac{1}{2}$	Լիսրան	Ոսկի »
Ամերիկան սմբողջ եարտաս	»	4 $\frac{1}{2}$— 5 $\frac{1}{2}$	»	» »
» պակատուոր	»	3 $\frac{3}{8}$ —5 $\frac{1}{4}$	»	» »
Ամթարցու (լօնկ գլօթ) լաւ տեսակն	»	4—4 $\frac{3}{4}$	»	» »
» » » վոքր լիսրա	»	4 $\frac{7}{8}$– 5	»	» »
» » » ներկուելու (գօտինքթն)	»	5 $\frac{1}{4}$– 5 $\frac{3}{8}$	»	» »
Եէլքէն տէպի լաւ տեսակ	»	4 $\frac{3}{8}$– 4 $\frac{1}{2}$	»	» »
» » երկրորդական	»	4–4 $\frac{1}{4}$	»	» »
Խամ ամթար (չբրթինկ) լաւ տեսակ	»	35 — 48	Թօսրը.	» »
» » » միջին »	»	50 — 62	»	» »
» » » վար »	»	60 — 70	»	» »
Մլեւ 4 թիւ (չափալը) 3 թօսրը (30–35–38 ինչ.)	Ղրշ	40 $\frac{1}{2}$—		» 112
» 16 » (Թէնգիզի) » » ( )	»	35 $\frac{1}{2}$—37		» »
» 26 » (Աքօչխա) » » ( )	»	43 $\frac{1}{2}$—		» »
Մանած վաթէր 4—14	Ղրշ	34—37	վաքէթը	» 106
» » 18—28	»	44—47	»	» »
» Էքսդրա (Ֆիլիմէնկ) 4—14	»	39—53	»	» »
» » ( ) 18—28	»	48—58	»	» »
» Էքսդրա դրօսիթօն 16—24	»	64—65	»	» »
» Սալի 8—14	»	52—58	»	» »
» » 20—24	»	69—72	»	» »
» Կարմիր Խալիոյ 4—14 լաւ	»	62—70	»	» »
» » » 20—	»	51—65	»	» »
» » Զուլիցերիոյ թիւ 20	»	76–83–85	»	» »
» » » » 4–14	»	70—76	»	» »
Թիֆթիք առաջին տեսակ	Ղշ	21 $\frac{1}{2}$–25 $\frac{1}{2}$–24	Օխայ 100	տակի
» երկրորդ »	»	20 — 21	» »	»
» սորին »	»	6 — 12	» »	»
» Վան	»	13—13 $\frac{1}{2}$	» »	»
Բուրդ Բասրայ սպրի Ա.	»	8 — 8 $\frac{1}{2}$	» »	»
» » » Բ.	»	6 —6 $\frac{1}{2}$	» »	»
» Քըրմա Ա.	»	6 $\frac{1}{4}$ – 6 $\frac{1}{2}$	» »	»
» » Բ.	»	4 – 4 $\frac{1}{2}$	» »	»
Մետաքս Խոքանոս	»	182 —205	» »	»
» Նուխի	Ֆրնք	33 — 42	» »	»
» Ռէշտ	»	26 — 32 $\frac{1}{2}$	» »	»
Բամպակ Հալէպ	Ղշ	5 $\frac{1}{4}$—5 $\frac{3}{4}$	» »	»
» Ամանա	»	5 $\frac{3}{4}$—6 $\frac{1}{4}$	» »	»
» Իզմիր և շրջակայք	»	6 $\frac{1}{2}$–7	» »	»
Ալֆոն Մալաթիա	»	220—230	» »	»
» Սէլանիք	»	220—	» »	»
» Զիլէ Թօքաթ	»	210—220	» »	»
» Պալքէսէր	»	190—200	» »	»
» Լենիբրիա	»	180—190	» »	»
» Նալը խան Պէյ պազար	»	170—175	» »	»
» Կէյվէ Պիլէճիք	»	170—	» »	»
» Զըբրնիթը	»	110—135	» »	»
Ֆիթրէ առաջին ճերմակ	»	27 — 28	» »	»
» աչխատուած ճերմակ	»	20 — 25	» »	»
» լաւ բնական »	»	20 — 21	» »	»
» սովորական »	»	18 — 19	» »	»
» լաւ դեղին	»	16 — 17	» »	»
» երկրորդ դեղին	»	14 — 15	» »	»
» Զամբուր	»	3 — 4	» »	»
Սալէբ լաւ տեսակ	»	16– 16 $\frac{1}{2}$	» »	»
» երկրորդ տեսակ	»	14 $\frac{1}{2}$—15	» »	»
Մահմուզիէ առաջին ճերմակ	»	160 —180	» »	»
» երկրորդ	»	80 —100	» »	»
» երրորդ	»	60 — 70	» »	»
Մեղրամոմ լաւ տեսակներ	»	20 — 23	» »	»
» սորին »	»	19 — 20	» »	»
Կաղին Տրապիզոն	»	30—	կենդնր	»
» Բէրասունի	»	30—	»	»
Ճէհրի Էլին	»	–	Օխայ	»
» Բայսար	»	3–3 $\frac{1}{2}$	» »	»
» Անկորա	»	3–3 $\frac{1}{2}$	» »	»
» Թօքաթ	»	7 $\frac{1}{4}$–7 $\frac{3}{4}$	» »	»
» Զօրում	»	5 $\frac{3}{4}$–6 $\frac{1}{4}$	» »	»
» Վար տեսակներ	»	—	» »	»
Եղջիւր 200 դիւզի հաշիւ	»	3 $\frac{1}{4}$— 3 $\frac{3}{4}$	» »	»
Մորթ գոմէշի չոր	»	9 — 9 $\frac{1}{2}$	»	»
» թաց	»	6 —6 $\frac{1}{4}$	»	»
» կովի չոր	»	10 —10 $\frac{1}{2}$	»	»
» թաց	»	6 — 7	»	»
» Ոչխարի	»	20 — 26	»	»
» Այծի	»	20 — 25	»	»
» Գառին	»	16 —18 $\frac{1}{2}$	»	»
» Այծուկի	»	—	»	»
» Նապաստակի	»	—	»	»

VICHY

ՎԻՇԻ

Վարչութիւն, Փարիզ 8, Պուլվար Մանմարթր.

PASTILLES DIGESTIVES. — Այս հաբերը Վիշիի մէջ պարունակուած են Ջերմուկներէն ելած աղով, ախորժահամ են և ապահով դարման մ՚են դիւրամարսութեան դէմ։

SELS de VICHY pour BAINS. — Այն անձանց համար որք չեն կրնար Վիշի երթալ։

Կեղծիքն զգուշանալու համար, սոյն գիներու և չիներուն վրայ պահանջել ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրօշը։ Կը գտնուի Պոլսոյ բոլոր դեղագործաց քով։

1882Ի ԳԻՍԱՒՈՐԸ

Այս հռչակաւոր վուշէայ սիկարի թուղթը որ ամենաբնտիր տեսակէ է, կը յանձնարարուի ծխողաց։ Մայրաքաղաքիս բժշկական վարժարանը փորձելով հաստատած է թէ և ոչ մէկ թունաւոր բուսական նիւթ կը պարունակէ։ Ընդհանուր շտեմարանն է՝ բոլոր Տաճկաստանի համար Գալաթիա, Մոմխանէ փողոց Սիթէ Ֆրանսէզ, 82 թիւ, Պ. Զաքարիա Մարանկիոսի վաճառատունը։

Կը գտնուի նաև Կ. Պոլսոյ և Գալաթիոյ բոլոր ծխավաճառաց քով։

25–78

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՕՆԵՆԱԿ

Մայրաքաղաքիս Հայ փաստաբաններէն Նազարէթ Էֆէնտի Խաչէրեան ընկերակցած է Յովհաննէս Էֆէնտի Կիւլպէկեանի, որ Ֆրանսայի Էքս քաղաքի իրաւաբանական համալսարանի մէջ իւր ուսմունքը փայլուն յաջողութեամբ աւարտած և Լիոնայի ու Գրենոբլի վկայագիրն ստանալով, այս անգամ վերադարձած է։

Խաչէրեան Էֆէնտի որ Պրուսէլի համալսարանէն վկայեալ է, և Յունարէն ու Տրուքի տիտղոս ունի, անդէն ծանօթ է մեզ՝ դատական ասխարհի մէջ ունեցած համբաւովն, և Կ. Պոլսոյ իրաւաբանական վարժարանին մէջ պատժական օրինաց դասախօսութեամբն։

Գոհ պիտի լինին ամէն անոնք, որք պիտի դիմեն յիշեալ էֆէնտիներու դրասենեակն՝ որ կը գտնուի Գալաթիա, Գալաֆեան խան, թիւ 9։

7—13

ԱԶԴ

ԱԿՈՒԱՅԻ ՅԱՒ ԶԷՔ ՈՒՆԵՆԱՐ

ԵԹԷ ԳՈՐԾԱԾԷՔ

(Ժիրօնտի) Սուլդ գաւառին Պէնէտիկս Եան Կրօնաւորաց Ակռայ մաքրող փոշին կամ դեղը որ 1880ին Պրիւսէլի մէջ 2 ոսկի միտալ առած է, ինչպէս նաեւ մեծ մրցանակներ. այս դեղը հնարած է 1373ին Բիէր Պուրսօ Քըրանսացի Կրօնաւորը։

ԶԵՆՈՊԻԻ ՋՈՒՐ

Որուն՝ մրցմամբ չի կրնար հաւասարիլ ո՛չ մէկ դեղ. մաղերուն իրենց բընական գոյնը տալու մասին։ Արդիւնքը քիչ օրուան մէջ կերեւի յաջողութիւն։ Գործածութիւնը խիստ դիւրին է. ներկ մը չէ այս, այլ լուացման ջուր մը, որ մաղերը կը պահպանէ եւ կը զօրացնէ, գոյն տալով։

ԼԱՆՀՕՐԻ ԲՈՒՏՐՈՒ

Փայլուն, փափուկ, թափանցիկ և ընտիր բուտրա մ՚է որ շարունակ գործածուելով մարթը կը գեղեցկացնէ և կը փայլեցնէ, ո՛և է այլայլումէ զերծ պահելով զայն։ Խիստ փոքր մաս մը բաւական է ամբողջ երեկոյթի մը համար։ Փափուկ փետրեայ վրձինով կը գործածեն զայն և ապա կը սրբրենուրբ կտաւով մը կամ կակուղ վրձինով։

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՆԵՐԿ Տօքթ. Բիշարտն

Վայրկենական կերպով մաղերը և մօրուքը ներկելու համար կատարելագործեալ բաղադրութիւն մ՚է, որ մարթին վրայ բիծ չի թողուր։

ՋՈՒՐ Տօքթ. Թօնրնի, վայրկենական կերպով մօրուք ներկելու համար։

ԲՈՒՍԱԿԱՆ ՋՈՒՐ, գլուխ մաքրելու համար.

ՍԷՖԱԼԻՆ, դեղ Տօքթ. Ռուսսոյի, մազ թափելու դէմ, որ թաղանթը ները կը հանէ և դեղեցիկ մաղեր կը բուսցընէ, շարունակ գործածուելով։

ԱՐՆԻԲԱԼԻՆ, Տօքթ. Ռուսսոյի, դեղեցիկ թուալէթի ջուր, խածուածքի, այրուածքի, այտերու բորբոքման դէմ ելլն։

ԷՔՍԹՐԷ, Խաշկնդէ համար, ամեն տեսակ ընտիր ջուրեր։

ԿԼԻՍԷՐԻՆ, ձեռքի ուռեցքի և աբեզ ակնակէզ դէմքերու համար։

Վաճառատուն հաստատեալ յամին 1807. —Ընդհանուր գործակատար Ա. ՍԸԿԷՆ, Հիւկիւրի փողոց թիւ 3, ի Պօրսա։

Այս դեղերը կը գտնուին նաեւ Կ. Պոլսոյ բոլոր դեղարանաց մէջ։

Ատրճանակեր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ